



ԼԵՅՍ

ԿՐԹՆԵԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏՆԵԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ
ՊԱՇՏՈՆԵԿԱՆ ԵՐԿԱՄԱԿԹԵՐԹ
ԳՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԵԱՆ



LUYS — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՏՕՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Խորէն Ա. քինյ. Ներսէսեան

ԿԻՆԸ ՅԱԿՈՒՔ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԵՐԱՓՈՒՄՍԱՆ
ԾԱՌԻՆ ՄԷՋ

Թամար Տասնապետեան

ԵԹԷ Կ՛ՈՒՋԷՔ ՅԱԳԵՆԱԼ

Զարեհ Արք. Ազնաւորեան

«ԱԿԱՆՋ ՈՒՆԵՑՈՂԸ ԹՈՂ ԼՍԷ՛»

Գրիգոր Ծ. վրդ. Զիֆթճեան

ԹՆՈՐՀԸ

A. T. Mollegen

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ

Յակոբ Արք. Գլնճեան

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Փառէն Վրդ. Վարդանեան

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ՅԱՅՏՆԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Նորայր Արք. Ծովակաճ

THE TWELVE APOSTLES

Rev. Nerses Manoogian

Ս. Աստուածածնայ Տօնին Պատգամը

Տիրամայր Ս. Կոյս Մարիամին անձը սերտ եւ անբաժան առնչութիւն ունի Յիսուս Քրիստոսի փրկչական տնօրինութեան հետ:

Անիկա միամայր դուստրն էր Դաւթի ցեղէն ծնողքի մը, Յովակիմայ եւ Աննայի եւ ուխտի գաւակ՝ միանգամայն:

Իսրայէլացի այլ կիներու եւ կոյսերու շարքին, Մարիամն ալ փոքր տարիքէն նուիրուած էր տաճարի սպասարկութեան եւ Աստուծոյ ծառայելու սուրբ գործին:

Ան դաստիարակուելով տաճարի կրօնական մաքուր մթնոլորտի մէջ, ունեցաւ աստուածահաճոյ արժանիք մը, որով շնորհք գտաւ Աստուծմէ, եղաւ Տիրամայր ու Աստուածածին եւ բարձրացուց վարկը իր անարգուած սեռին:

Այս իսկ պատճառով, ուղղափառ եկեղեցին սկիզբէն երկիւղած մեծաբանք ունեցաւ անոր յիշատակին հանդէպ, մանաւանդ՝ Ն. դարէն յետոյ, երբ Եփեսոսի ժողովին մէջ դատապարտուեցաւ Նեստորի մոլորութիւնը եւ վարդապետականօրէն հաստատուեցաւ եւ ընդունուեցաւ անոր ծնող եւ մայր Աստուծոյ լինելու իրողութիւնը, այսինքն՝ Աստուածածին եւ Աստուածամայր կոչումը: Հայց. եկեղեցին, տարուան ընթացքին կը կատարէ Սուրբ Կոյսին անուան ու յիշատակին նուիրուած եօթը տօներ.–

1. Յղութիւն Աստուածածնի ի յԱննայէ. 2. Ծնունդ Ս. Աստուածածնի. 3. Ընծայումն Աստուածածնի երից ամաց ի տաճարն. 4. Աւետումն Աստուածածնի. 5. Վերափոխումն Աստուածածնի. 6. Գիւտ Գօտեոյ, եւ 7. Գիւտ Տիոյ:

Այս եօթնէն՝ Վերափոխման տօնը, հայ եկեղեցին բարձրացուցած է տաղաւարներու կարգին, զոր ամէն տարի կը կատարէ հանդիսաւորապէս Օգոստոսի կիսուն, իննօրեայ տօնակատարութեամբ:

Աստուածածնի մահուան ու վերափոխման պարագաներուն կապակցութեամբ եղած աւանդութիւնը, զոր բոլոր հին եկեղեցիները գրեթէ նոյնութեամբ կ'ընդունին, եւ որ համառօտուած է Կիրակոս Վարդապետին յօրինած «Արեւելք Գերարփին» շարականին մէջ, կը նկարագրուի հետեւեալ կերպով.

Յովհաննէս Առաքեալին մօտ ապրելէն վերջ, կը կնքէ իր մահկանացուն: (Այս պարագան կը փաստէ թէ՛ Ս. Կոյսը Յիսուսէն զատ գաւակ չէ ունեցած, այլապէս պիտի մնար իր գաւակին մօտ): Բոլոր Առաքեալներ, բացի Բարթոլղիմէոսէ (որ Պարսկաստանի վրայով մեկնած էր դէպի Հայաստան, քրիստոնէական լոյս հաւատքը քարոզելու համար հայոց մէջ) մեծ հանդիսութեամբ ու թափօրով կը կատարեն յուղարկաւորութիւնը եւ կը թաղեն զայն Գեթսեմանիի ձորակի կշտին: Թաղումէն ետք երեք օր շարունակ, տիւ ու գիշեր, հրեշտակային քաղցր երգեր կը լսուին անոր գերեզմանին վրայ, քիչ վերջ կը հասնի Բարթոլղիմէոս, որուն Տիրամայրը վերջին անգամ մը տեսնելու փափաքին գոհացում տալ ստիպուելով, Առաքեալներ կը բանան գերեզմանը, ուր սակայն չեն գտներ անոր մարմինը, որմէ կը հետեւցնեն, թէ անիկա մեռած չէր, այլ՝ ննջած էր լոկ, եւ թէ հրեշտակներու երգաբանութիւններով Յիսուս,

ըստ իր խոստման, եկած ու իր մայրը երկինք փոխադրած էր:

Աւետարաններու մէջ Ս. Կոյս Մարիամին կը հանդիպինք Յիսուսի ծննդեան շրջանին եւ Անոր տնօրինական կեանքին հետ կապ ունեցող պարագաներուն միայն: Անոր կեանքին մնացեալ մասը, իր Աստուածամօր մեծ ու գերազանց կոչումովը նուիրուած է Միածին Որդւոյն խնամքին ու դաստիարակութեան սուրբ գործին:

Հրեշտակին պատգամը, թէ՛ «Նա եղիցի մեծ, Որդի Բարձրելոյ կոչեացի եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի» խորապէս դրոշմուած էր Մարիամի սրտին ու հոգիին մէջ, որով ան պաշտումով կը հետեւէր Յիսուսի իւրաքանչիւր քայլափոխին եւ կը հաւատար Անոր աստուածային կարողութեան: Այս հաւատքն էր, որ Կանայի հարսանիքին՝ հրաշքի մը ակնկալութեամբ Մարիամը մղեց դիմելու Յիսուսին եւ ըսելու՝ «Որդեակ, գինի ոչ ունին», եւ իրագործուեցաւ հրաշքը, ջուրով լեցուն վեց թակոյկներուն պարունակութեանց գինիի փոխուելովը:

Ս. Կոյսին Վերափոխման տօնը, կնոջ մը արժանիքին փառաւորման նուիրուած խորհրդալից տօնն է, որ մեծ նշանակութիւն ունի հայոց մէջ, ոչ միայն եկեղեցական տեսակէտով, այլ նաեւ՝ մեր ազգին ընկերային ու առտնին կեանքին կապակցութեամբ:

Հայ իգական սեռը սիրելով Ս. Կոյսը որպէս իտէալ մայր, ցանկացած է իւրացնել անոր գեղեցիկ յատկանիշները եւ կոչուել՝ Մարիամ, Սրբուհի, Տիրուհի, Մաքրուհի, Իսկուհի, Թագուհի եւն.:

Հայց. Եկեղեցին Ս. Աստուածածնայ տօնին առիթով, անոր կեանքէն պատգամներ կու տայ իր զաւակներուն եւ ի մասնաւորի իգական սեռին:

Արդ, ջանանք վեր առնել Ս. Կոյս Մարիամի կեանքին արժանիքն ու յատկանշական գիծերը:

Ա. — Ս. Կոյսը տիպար՝ մայրութեան գաղափարի

Մայրը կեանքի ակնադբիւրն է. անկէ կախում ունի զաւակներուն, ընտանիքին եւ ինչո՛ւ չէ նաեւ՝ մարդկային ընկերութեան անհատներ ծնիլ ամէն դարու մէջ: Բայց ինչպիսի՞ մայրեր:

— Ա՛յն մայրերը, որ Ս. Կոյսին պէս մայրութեան գաղափարով տոգորուած են:

Աշխարհի Փրկիչ Յիսուս մը ծնելու համար՝ Աստուծոյ Ս. գործին նուիրուած, կրօնական շունչով սնած, Ս. Գրական ճշմարտութիւններով կերտուած, հեղութեան ու պարկեշտութեան առաքինութիւններով օժտուած, մաքրամաքուր ու սրբակեաց Մարիամ մը անհրաժեշտ էր:

Եկեղեցին, ազգն ու հայրենիքը իր կեանքին գնով պաշտպանող Քաջ Վարդան մը ծնելու համար, աստուածարեալ Սահակ Պարթեւ հայրապետի շունչով սնած Սահականոյց մը պէտք էր:

Մեր ազգային պատմութեան մէջ կը հանդիպինք բազում տիպար մայրերու, որոնք ստուած են մեծ զաւակներ, որոնք կրօնական, մշակութային եւ

այլ մարզերու մէջ կատարած իրենց մեծ գործերով անմահացած ու յաւերժացուցած են իրենց ազգը. եւ ասոնց իւրաքանչիւրի ետին կը տեսնենք տիպար մայր մը. որպիսիք են՝ Սահականոյշը, Փառանձեմը, Զուրկը, Մարիամը, Վարդանանց չըջանի «Տիկնայք Փափկասունք»ը եւ այլ շատեր:

Հին Ուխտի իմաստունը կ'ըսէ. — «Առաքինի կինը ո՞վ կրնայ գտնել, անոր գինը գոհարներէ շատ աւելի է: Վայելչութիւնը սուտ է, եւ գեղեցկութիւնը՝ ունայն, սակայն Տիրոջմէ վախցող կինը պիտի գովուի: Շնորհալի կինը պատիւ կը ստանայ: Գեղեցիկ կինը որ խոհեմութիւն չունի, խոզին քիթը դրուած ոսկի օղակին կը նմանի: Առաքինի եւ տիպար կինը իր էրկանը պսակ է: Իմաստուն կինը յիրաւի իր տունը կը շինէ, բայց յիմար կինը զանրկա իր ձեռքովը կը փլցնէ» (Առակ. ԼԱ. գլուխ):

Այն այրերը, որոնք մեծ մարդիկ եղած են, պարտական են իրենց մօրը. եւ ըսուած է. —

«Մօր ձեռքերը, որ օրօրոցը կը շարժեն՝ գաշխարհ կը շարժեն, կեանք եւ քաղաքակրթութիւն կը կերտեն»: «Երբ հանդիպիք մեծ մարդու մը, կրնաք վստահ ըլլալ, որ անոր մայրը նոյն մեծութեան հաւասար էր»:

Մեծն Կոստանդիանոս, Դ. դարուն, իր մօր Հելդինէի ազդեցութեամբ քրիստոնէութիւն ընդունեց ու զայն պետական կրօն հռչակեց:

Ս. Օգոստինոս, որ Դ. դարու նշանաւոր հայրերէն է, իր մօրը աղօթքներուն շնորհիւ հեթանոսութենէն քրիստոնէութեան դարձաւ: Նոյնը՝ Յովհան Ոսկեբերան:

Աբրահամ Լինքըն ըսած է. — «Ինչ որ ունիմ եւ ինչ որ եմ, հրեշտականման մօրս կը պարտիմ»:

Ե. դարուն վերջերը, Վահան Մամիկոնեան, պատերազմի մը ընթացքին կը գերէ պարսից Շապուհ թագաւորին կանանոցը, եւ իր մօրմէն ստացած առաքինութեան ոգիով կը վերադարձնէ զայն պատուով: Շապուհ սքանչացած Վահանի առաքինութենէն, իր գինիի բաժակին վրայ փորագրել կու տայ անոր նկարը եւ միշտ առաջին «կենաց»ը կը նուիրէ Վահանի յիշատակին:

Նախաքրիստոնէական շրջանին իսկ մայրութեան գաղափարը պաշտամունքի առարկայ եղած է հայոց մէջ: Աստղիկն ու Անահիտը կը ներկայացնէին մեր առաքինութեան իտէալը: Եւ այդ իտէալն էր, որ մղեց Տրդատ թագաւորը ծայրագոյնս խստանալու Ս. Գրիգորի դէմ եւ ենթարկելու զայն տաժանակիր չարչարանքներու: Որովհետեւ ան ընդդիմացած էր Անահիտ դիցուհւոյն ծաղիկփունջ մը ընծայելու հրահանգին:

Հետեւաբար, հայ ժողովուրդը մօր դերի մասին ուրիշ ազգերու նման վաղուց ի վեր ունեցած է բարձր հասկացողութիւն եւ կարեւորութիւն ընծայած՝ անոր կատարելիք գերին:

Մայր մը պէտք է ըլլայ բարեկիրթ, ուշիմ, ժրջան, հաւատարիմ ու նուիրուած, վարք ու բարքով մաքուր, հաւատացեալ ու բարեպաշտ: Նման մայր մը իր ընտանիքը դրախտի կը վերածէ: Առանց Աստուծոյ, առանց փոխադարձ անխառն սիրոյ գոյութեան, առանց հաւատքի ու երկիւղածութեան

կարելի չէ ունենալ մնայուն ու յարատեւ երջանկութիւն:

Մայր մը եթէ կոչում չունի, եթէ զաւակաց մատաղ սրտերուն մէջ անոնց մարմնական սնունդին հետ համընթաց ծառայասիրութեան ու հնազանդութեան հոգին չի կրնար մշակել, հաւատքի ճամբով՝ չարը մերժելու եւ բարին ընտրելու գիտակցութիւն չի կրնար արթնցնել, անոնք կը մեծնան անտառի անմշակ ծառերուն պէս եւ անոնց կեանքի պտուղը կ'ըլլայ փուշ ու տատասկ:

Յառաջ կու գան այնպիսի՝ երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնք իրենց երջանկութիւնը փոխանակ ընտանեկան յարկէն ներս փնտռելու, աշխարհիկ վայրերու մեղսալից ու փճացնող միջավայրերու մէջ կ'որոնեն:

Այս կերպով յառաջ եկած սերունդ մը, ոչ թէ լոկ որեւէ նպաստ չի բերեր ազգին ու եկեղեցիին, այլ՝ ընդհակառակն, կը բերէ նրկթական ու բարոյական սնանկութիւն, ներքին փտութիւն ու այլասերում:

Բ. — Սուրբ եւ անարատ կեանքը Ս. Կոյս Մարիամին

Ս. Կոյս Մարիամը սկիզբէն մինչեւ վերջ եղաւ սրբակեաց, հայելիի պէս ջինջ ու յստակ: Ան ապրեցաւ Աստուծոյ մօտ եւ Աստուծոյ հետ: Աշխարհի փրկութեան համար գալիք Մեսիային մայրն ըլլալու սրբազնասուրբ իտէալով ոգեշնչուած՝ ան արժանացաւ ընդունելու Աստուծոյ հրեշտակին այցելութիւնն ու աւետումը: Ենորհք մը, որով հասաւ այնպիսի՝ բարձրութեան, որ օրինակ հանդիսացաւ բոլոր դարերու իգական սեռին. եւ ցոյց տուաւ թէ՛ աղջիկ մը կամ մայր մը որպիսի ծառայութիւն կրնայ մատուցանել եւ ինչպիսի գաւակ կրնայ տալ մարդկութեան:

Առանց մաքուր կենցաղի կարելի չէ սրտի ու հոգւոյ ներդաշնակ կեանք ունենալ: Եւ իտէալ մայր ըլլալու նախապայմանը՝ մաքրակենցաղ ըլլալն է:

Գ. — Ս. Կոյս Մարիամի կեանքին գլխաւոր յատկանիշներէն մէկն ալ Պարկեշտութիւնն էր

Պարկեշտութիւնը (զոր կարելի է նոյնացնել ամօթխածութիւն բառի իմաստին հետ) կնկայ լաւագոյն յատկութիւններէն մին կրնայ նկատուիլ: Այլ խօսքով՝ կնկան բարոյական արժանիքը պաշտպանող պատուարն է ան: Եւ Կոյս Մարիամի կրօնաբոյր նկարագրին ու Աստուածահաճոյ արժանիքին լուսաշող յատկանիշն էր պարկեշտութիւնն ու ամօթխածութիւնը:

Սոյն գեղեցիկ յատկութենէն զուրկ կին մը, եթէ ունի այլ արժանիքներ, զանոնք եւս հետզհետէ կորսնցնելու դատապարտուած է: Որովհետեւ անպարկեշտութիւնը նախադուռն է ամենայն չարեաց, անմաքրութեան եւ նաեւ անբարոյութեան:

Հայ իգական սեռը ժամանակին եղած է պարկեշտ եւ ամօթխած: Ո՛չ թէ հրապարակներու վրայ, այլ՝ նոյնիսկ ընտանիքէն ներս հայ կնոջ ապրելակերպը, շարժուձեւը, նիստն ու կացը եւ խօսակցութիւնը միշտ չափուած ու կշռուած ըլլալով, ամբողջ էութեամբ պարկեշտութիւն կը բուրէր: Զաւակները չէին նշմարեր որեւէ գայթակղեցուցիչ երեւոյթ, չէին լսեր որեւէ բարոյական

արատաւորող բառ: Սակայն այժմ, հոլանի թեւերով ու գլխաբաց հրապարակներու վրայ երեւնալ՝ հաճոյք կը պատճառէ մեր իգական սեռի մեծամասնութեան: Ափսո՛ս...: Այս ձեւով կիները նոյնիսկ իրենց ամուսիններուն երեւնալու կ'ամչնային. անձնական եւ ազգային արժանապատուութեան հարց կը նկատէին զայն: Մահուան չափ ծանր էր կնոջ մը համար ցոյց տալ իր մազերը կամ բաց թեւերը: Իսկ հիմա հրապարակներու վրայ ցուցադրութեան դրուած են...:

Մեր նախնեաց այդ պարկեշտութիւնն ու ամօթխածութիւնը, այդ պատուախնդիր նկարագիրը չէ՞ր, որ մղեց բազում կոյսերն ու մայրերը ընդգրկելու դաժան մահը, նետուելու ջուրի եւ հուրի մէջ, որպէսզի չարատաւորուին հայ ցեղին անունը, պատիւը եւ արժանապատուութիւնը:

Կանանց եւ մայրերու պարտականութիւնն է Աւետարանը եւ Աւետարանով հրահանգուած հոգեկան ու բարոյական ճշմարտութիւնները, ինչպէս նաեւ ազգային արժէքներու ոգին տալ եւ ուսուցանել իրենց զաւակաց. եւ Ս. Կոյս Մարիամի կեանքին օրինակով կրթել ու բարձրացնել ընտանիքներու բարոյական մակարդակը:

ԽՈՐԷՆ Ա. ՔԶՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ



ԿԻՆԸ ՅԱԿՈՒՔ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՃԱՌԻՆ ՄԷՋ (ԺԵ-ԺԷ Դ.)

(ՔԱՆԻ ՄԸ ԴԷՄՔԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ)

«Առաքիկի կիկեր շատ կան,
բայց դուն բոլորը կը գերազանցես»
(Առ 31:29)

Քրիստոնէութեան համար կենսական՝ աստուածաբանական դէմք մը եւ ժողովրդական պաշտամունքի մը առարկան ըլլալէ իսկ առաջ, Մարիամ կենդանի, իրական էակ մըն էր, մեր աշխարհին պատկանող: Ան կին մըն էր, կին մը որ Յուդայի մէջ կ'ապրէր: Անոր հանդէպ մեր կեցուածքը կախեալ է իգականութիւնը, կիները եւ մայրութիւնը մեր ընդունած ձեւէն, եւ ասիկա, ըլլանք այր թէ կին: Բայց, առաւել, ան հրէուհի մըն էր, Սիրոնի աղջիկ մը: Ջայն հասկնալու համար, անկարելի է միայն Նոր Կտակարանին կամ քրիստոնէական աւանդութեան վստահիլը: Մարիամ անըմբռնելի կը մնայ առանց Հին Կտակատարանին, Աստուծոյ յայտնութեան եւ ժամանակաշրջանին մշակոյթին: Ան կը բացայայտուի միայն երբ նկատի կ'ունենանք Աստուծոյ ստեղծագործութիւնը եւ գործօն սէրը բոլոր մարդկային էակներուն համար, Ս. Գիրքին ըսածին լոյսին տակ: Սուրբ Կոյսէն, Մատոննայէն կամ Երանելի Աստուածածինէն խօսելէ առաջ, պէտք է խօսինք կին Մարիամէն:

Նագարէթի Մարիամը

Համեստ խաւէ՛ հրեայ, աշխարհի արարիչին ուշադրութիւնը գրաւեց: «Աստուծոյ ուժը» մտաւ իր մէջ: Կը լսէ թէ ինքը սիրուած է, շնորհալի, օրհնուած եւ թէ Հոգին գինք իր հովանիին տակ պիտի առնէ: Արդէն Մարիամի մէջ Հոգին կ'իջնէ, գայն Օծեալին Մայրը դարձնելով:

Իր համեստ տան մէջ, Մարիամ կը խայտայ իր սքանչելի գաղտնիքը կրելով: Այն ատեն Եահզվէին ազքատներուն սիրոյ եւ ուրախութեան երգը կը ժայթքի իր մէջ: Ուժ մը գայն դէպի Յուդայի լեռները կը կանչէ, ծառայելու համար իր ծեր գարմուհիին, որ գաւակ մը կը սպասէ: Հոն երեք ամիս կը մնայ եւ իր տունը կը դառնայ իր Աստուածորդիին ծննդաբերութեան սպասելով:

Իր սիրած ամուսինին մօտ, ան ազգերու լոյսին «հասակով, իմաստութեամբ եւ շնորհքով» մեծնալը տեսաւ: Հացը կտրելու կամ գինին լեցնելու ժամանակ, անոնք Արարիչին փառք կու տային: Շաբաթ գիշերը, Մարիամը լապտերը կը վառէ, իր որդիին ալ այս ծիսական աղօթքը փոխանցած էր: Ծանր աշխատանք կը տանէին. ծառերը կը կտրէին, չոր տախտակներ կը հաւաքէին եւ կ'ասեղնագործէին, կը ցանէին եւ կը հնձէին:

Ան միշտ իր զաւակին հետ էր, ամենուր անոր կը հետեւէր. Կանայի առաջին հրաշքէն մինչեւ ինչ՝ փրկութեան կատարելութիւնը, եւ ապա մինչեւ Յարութիւն, աշակերտներուն հետ էր մինչեւ իր երկինք Վերափոխումը:

Յիսուսին, այսինքն՝ Աստուածորդիին մայրը ըլլալով, Մարիամ առաքեալին, աւետարանիչին, նախընտրուած աշակերտին մայրը դարձաւ: Իրմով Աստուած մարդկութեան հետ ամուսնացաւ. ան ինքը Աւետարանն է, «Սիոնի ուրախ պատգամաբերը», առաքեալներուն Մայրը, որուն ձայնը մինչեւ երկրի ծայրամասերը լսուեցաւ: Ան նոր Ուխտի բոլոր հաւատացեալներուն մայրը եղաւ (Մեծացուցէ):

Ռաքէլ, Թամար, Բախար, Հուլթ... Հին Կտակարանին մէջ, Սիմոնին զոքանչը, Յայրոսին աղջիկը, Մարիամ մագդաղեհացին, կիները ինչպէս որ անաւանդ Մարիամ, Յիսուսի մայրը... Նոր Կտակարանին մէջ, ծանօթ եւ անծանօթ կիներ, անուն կրող կամ բոլորովին անանուն, իզական յատուկ շեշտ մը բերող՝ Ս. Գիրքի շատ արական ամբողջին:

Իրենց լուսութեամբ, ճարտարութիւններով, քաջութեամբ, սէրերով, կիրքերով, անոնք «աներեւոյթի խորհուրդին քահանայուհիները» ըլլալու կոչուած են: Միայն իրենք կրնան Աւետարանի որոշ էջերը լաւապէս մեկնաբանել: Ոմանք, առանց առաքինութեան օրինակներ ըլլալու, Յիսուսի ծննդաբանական ծառին վրայ կը գտնուին: Ուրիշներ իր կեանքին եւ պատգամին կենդանի վկաներն են քրիստոնէական պատմութեան մէջ:

Ս. Գիրքի իգական մեծ դէմքերը

Հասկնալու համար Մարիամին յղումները Նոր Կտակարանին մէջ, պէտք է տեսնել թէ ան կը ներառուի Հին Կտակարանի կին մեծ դէմքերու երկար պատմութեան մէջ: Նախ, ինչ որ մեր հեղինակը՝ Յակոբ վարդապետ չի յիշատակեր, կայ Եւային անձնաւորութիւնը. Աստուծոյ պատկերով ստեղծուած, ան մարդուն հաւասարն է, ստեղծագործութեան վրայ Աստուծոյ թագաւորութիւնը ներկայացնող այրին հետ: Բայց, փոխանակ Ադամին օգնականը ըլլալու, ան զայն փորձութեան կը մղէ: Բայց եւ այնպէս, ան բոլոր կենդանիներու մայրը ըլլալու խոստումը կը ստանայ (տե՛ս Ծն 3.20):

1.- Եւան, յաւիտեանական մեղք եւ փրկութիւն

Ս. Գիրքին եւ անոր երկու կտակարաններուն մէջ յիշատակուած առաջին կինը Եւան է: Ան Ադամին՝ առաջին մարդուն կինն է, եւ Աստուած զայն ստեղծած է անոր օգնականը ըլլալու համար (որովհետեւ անոր սեփական էութեանն է) եւ անշուշտ արարչութեան գործը շարունակելու համար: Բայց Եւայի կեանքին ամենանշանաւոր արարքը Ադամը մեղքի մղելուն մէջ կը կայանայ, եւ այսպէս, ան մարդկութիւնը մութին պիտի առաջնորդէ դարեր եւ դարեր շարունակ, բայց աւելի կարեւոր նշում մըն ալ կայ. մարդկութիւնը յա-

ւերժական փրկութիւն պիտի ստանայ նաեւ կնոջ մը, նոր Եւային միջոցով:

Եւային խոստումը վերջը շատ անգամներ կրկնուած է: Այս խոստումին համաձայն, Սառան, Աբրահամի կինը, կը յղանայ որդի մը, Իսահակ, հակառակ իր առաջացած տարիքին (տե՛ս Ծն 18.10-14):

2.- Սառա եւ Հագար, ազատութիւնը եւ ստրկութիւնը

Աբրահամ իր հայրենական հողը ձգեց եւ ուղղուեցաւ Աստուծոյ ցոյց տուած ուղղութեամբ: Արդ, այս ընթացքին մէջ, իր կինը՝ Սառան իրեն կ'ուղեկցէր: Երկուքն ալ Աստուծոյ գաղափարը պիտի դրոշմեն Քանաանի հողին վրայ: Բայց քանի Սառան ամուլ էր, Աբրահամը, Աստուծոյ մէկ յայտնութեամբ եւ իր կնոջ արտօնութեամբ, պիտի պառկի իր աղախինին՝ Հագարի հետ, սերունդ մը տալու համար: Արդ, ամենողորմ Աստուածը իր Աբրահամ ծառային սեփական զաւակ մըն ալ պիտի տայ: Այսպէս Սառան երեսայի մը ծնունդ պիտի տայ, հակառակ իր ծեր հասակին, եւ պիտի ստանայ խոստումը թէ Օծեալը իր սերունդէն պիտի ըլլայ:

Տարօրինակ մերձեցում: Վրանի թագաւորական տիրուհիէն՝ Սառայէն կը սերի Քրիստոս, որ կնոջ իր արժանապատուութիւնը պիտի տայ: Աղախինէն՝ Հագարէն կը սերի Իսլամի մարգարէն, որ կնոջ ազատութիւնը պիտի խլէ:

Կարեւոր է, որ Սառան բոլոր հաւատացեալներու մայրը կը նկատուի, ինչպէս իր ամուսինը բոլոր հաւատացեալներու հայրն էր:

Նոյնպէս է Սամիսոնի (տե՛ս Դտ 13) եւ Աննայի որդի Սամուէլի (տե՛ս Ա.Թգ 1) ծնունդը: Այս բոլոր պատումներուն մէջ, Աստուած, մարդկային ամէն յոյսէ վեր, կը վերանորոգէ անդադար կեանքի տուչութիւնը, իր խոստումին հաւատարիմ մնալու համար: Այս պատումներուն շարքին յիշենք Ռաքէլը:

3.- Ռաքէլ, Իսրայէլի աղախինը

Լուսնային հին առասպելաբանութիւններուն նման, Յակոբի սիրած կնոջ՝ Ռաքէլի պատմութիւնը իր քրոջ՝ Լիային հետ զուգորդուած է:

Լաբանի դաւաճանութեան պատճառով, Յակոբ ամուսնացաւ Լիայի հետ (փոխանակ Ռաքէլի), որովհետեւ ըստ Լաբանի աւանդութեանց փոքր աղջիկը՝ Ռաքէլը իր մեծ քրոջ՝ Լիայէն առաջ պէտք չէ ամուսնանայ: Ուրեմն հակառակ Ռաքէլի հանդէպ իր ունեցած մեծ սիրոյն, Յակոբը Լիային հետ պիտի ապրի առանց գիտնալու:

Այսպէս Յակոբը եօթը տարի Լիային հետ պիտի ապրի եւ անկէ զաւակներ պիտի ունենայ: Բայց Քրիստոս պիտի գայ Ռաքէլէն, որ Իսրայէլի նախնիներէն երկուքին՝ Յովսէփին եւ Բենիամինին ծնունդ պիտի տայ:

Աստուած տկարը եւ անկարողը կ'ընտրէ՝ զօրաւորը ամչցնելու համար (տե՛ս Ա.Կր 1.27): Այս պատճառով, Իսրայէլի ժողովուրդին դժուար պահերուն, ան կը կանչէ կիները՝ Իսրայէլի փրկիչները դառնալու համար. Դեբորա, Յու-

դիթ եւ Եսթեր:

4.- Դեբորա, օրէնքի պահապանը

Յուսահատութեամբ եւ տառապանքով լի, հրեայ ժողովուրդը Եփրայիմի լեռը կը բարձրանայ Աստուծոյ մասին յիշելով եւ անոր իր տառապանքի ճայնը հասցնելով: Հոս, ժողովուրդը պիտի հանգիպի կնոջ մը, որուն անունը Դեբորա էր եւ որ կորսուած եւ մեռած ժողովուրդին կեանք պիտի տայ:

Ուրեմն հրեաները դէպի զինքը պիտի ուղղուին: Այս կինը դարձած է իրենց հայրենիքը՝ իր փառքի եւ յաւերժական յուսալից օրերու յիշողութեամբ: Դեբորան թէ՛ օրէնքի պահապանը եւ թէ՛ անոր ներշնչուած պահապանն է: Ան Իսրայէլը կը դատէր, մարգարէ եւ դատաւոր էր:

Դեբորան Բարակէն խնդրեց, որ դէպի Թաբոր ուղղուի, զօրք հաւաքէ որպէսզի Եհովայի ժողովուրդին դատը պաշտպանէ եւ յաղթանակէ: Բարակ ինքզինքին վրայ վստահութիւն չունէր եւ կը վախնար: Այսպիսով, Դեբորան անոր տեղը պիտի ստանձնէ, իր ժողովուրդին եւ իր հողին պաշտպանը եւ զօրքին ղեկավարը դառնալով: Եւ ժողովուրդը շնորհիւ Դեբորային իր հողը պիտի գտնէ, անշուշտ աստուածային նախախնամութեամբ:

5.- Եսթեր, քագուհի եւ բնաջնջումի պահապանը

Քսերքսէսի թագաւորութեան երրորդ տարին (482 Ք.Ա.), Իսրայէլի ժողովուրդը Բաբելոնի մէջ կրկին բնաջնջումի վտանգին ենթարկուեցաւ: Արդ, հրեայ ժողովուրդին մէջ կար կին մը, որ Եսթեր կը կոչուէր եւ որ թագաւորին կինը դարձաւ: Ուրեմն Բաբելոնի թագուհին դարձաւ: Բայց Եսթերը այս կացութենէն պիտի օգտուի իր ժողովուրդէն հեռացնելու համար ամէն վտանգ, մանաւանդ բնաջնջումի վտանգը:

Մաքուր, շնորհալի եւ գորովոտ կինը պիտի յաջողի թագաւորը համոզել եւ փրկել դատը, որուն նուիրուած էր:

Թ.Ա.ՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

ՄԱՏԵՆԱ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Claris BADER, *La femme biblique*, Librairie académique, Paris, 1966.

Eugen DREWERMANN, *L'évangile des femmes*, Seuil, Paris, 1996.

Michel DUBOST, *Marie*, Mame, Paris, 2002.

Réné LAURENTIN, *Jésus et les femmes: une révolution méconnue*, concilium, n° 154, 1980, էջ 97-108.

Marie-Thérèse soeur, *La femme et l'évangile*, Ouvrière, Paris, 1967.

ԵԹԷ ԿՈՒՉԷՔ ՅԱԳԵՆԱԼ

«Ամէնը կերան ու կշտացան. եւ տասներկու կողով լեցուն աւելցած կտորուանքները վերցուցին» — Մատթ. ԺԴ. 20:

Յիսուս, երբ Յովհաննէս Մկրտիչի գլխատման լուրը առաւ, Կափառնա-յուժէն ելաւ ու գնաց Բեթսալիդայի մօտերը, դաշտերու եւ բլուրներու առանձ-նութեան մէջ խոկալու եւ աղօթելու համար: Ժողովուրդը իմացաւ անոր մեկ-նումը, եւ ահա շրջակայ քաղաքներէն բազմաթիւ մարդիկ իր ետեւէն գացին: Աղօթքը վերջացնելէ ետք՝ Վարդապետը միացաւ իր աշակերտներուն, տեսաւ հաւաքուած ամբոխը, ու սիրտը յուզումով լեցուեցաւ: Մօտեցաւ անոնց հիւանդներուն եւ բժշկեց զանոնք. խօսեցաւ մարդոց ա՛յնքան քաղցր կերպով, որ կէսօրը անցաւ անզգալաբար: Երեկոյեան դէմ իր աշակերտները եկան ու ըսին. «Արդէն ուշ է եւ այս դաշտերուն մէջ ուտելիք բան ալ չկայ. ձգէ՛ որ ժո-ղովուրդը շրջակայ գիւղերը երթայ բան մը ուտելու համար»: Յիսուս պատաս-խանեց. «Ի՞նչ պէտք ունին երթալու, դո՛ւք տուէք իրենց ուտելիք»: Աշա-կերտները, զարմացած, առարկեցին թէ իրենք միայն հինգ հաց եւ երկու ձուկ ունէին, այդքանը որո՞ւ պիտի բաւէր: «Ինձի բերէ՛ք», ըսաւ Յիսուս, ու հրա-հանգեց որ մարդիկ խումբ-խումբ նստին խոտերուն վրայ: Իսկ ինքը առաւ հա-ցերն ու ձուկերը, Աստուծոյ շնորհակալութիւն յայտնեց եւ օրհնեց զանոնք, ապա աշակերտներուն տուաւ որ անոնք բաժնեն ժողովուրդին: Բոլորն ալ կե-րան ու կշտացան, եւ նոյնիսկ ահագին աւելցաւ, 12 կողով լեցնելու չափ: Իսկ ուտողներու բազմութիւնը մօտ հինգ հազար հոգիէ բաղկացած էր:

* * *

Հրաշալի այս դրուագը մտածումի երկու երեսներ կը բանայ մեր առջեւ: Մէկը՝ դէպքին պատմական նշանակութիւնն է, իսկ միւսը՝ անոր խորհուրդը եւ թելադրականութիւնը այսօրուան քրիստոնեային համար:

Ի՞նչ կարելի է մտածել անոր պատմական նշանակութեան մասին:

Ա. — Նախ կարելի է դիտել ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՓՆՏԹՏՈՒՔԸ: Մեզմէ շա-տերուն թերեւս զարմանալի թուի, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս մեծ զանգուած մը փնտռելու կ'ելլէ քարոզիչ վարդապետ մը, որ քաղաքէն ու գիւղէն հեռացած է դէպի ազատ բնութեան գիրկը: Ի՞նչը կը ստիպէր որ այդ մարդիկը ձգէին գործ, տան զբաղում եւ առօրեայ մտահոգութիւններ, ու երթային կրօնքի մը ուսուցչի ետեւէն: Մենք առ հասարակ կը սիրենք ինչ որ հանդիսաւոր ու շքեղ է, թատերական եւ անսովոր, զգայացունց ու վիպական: Յիսուս այդպիսի բա-նեք չէր հրամայներ: Ծիշդ է՝ որ իր խօսքն ու գործը վեհ էին, որոշ հասկացողու-թեամբ՝ անսովոր էին իր արարքները եւ քարոզութիւնը. բայց ան չէր ուզեր ինքզինք ցուցադրել: Եթէ մարդիկ իբր փաստ՝ նշան կամ հրաշք խնդրէին, կը մերժէր, երբ չափազանց խանդավառուէին իր կատարած հրաշագործութիւն-ներով՝ նոյնիսկ կը փախչէր անոնցմէ: Եւ սակայն անոնք կը գրաւուէին իր-

մով՝ որովհետեւ Նազովրեցի Վարդապետը բարոյական սկզբունքներու կենդանի օրինակը եւ ձայնն էր. իր ժամանակի օրէնքի ուսուցիչներուն պէս պատուիրաններ չէր սորվեցնէր, բայց տիրական շեշտով կը յորդորէր եւ ուղղութեան կը հրաւիրէր գանոնք:

Ճշմարտութեան օրինակն ու ձայնն էր Յիսուս: Իր խօսքը սեփական գործին արդարացումը չէր, ինչպէս մարդոց պարագային կ'ըլլայ յաճախ, այլ ձեւով մը ապացոյցն էր իր ուսուցումներուն, որոնց մէջ մարդիկ կը լսէին եւ կը կարգային աներկմիտ ու պարզ ճշմարտութիւնը՝ անկեղծ ձայնով: Նոյնպէս սիրոյ մարմնացումն էր Քրիստոս: Մարդիկը կը գրաւէր եւ իրեն կը կապէր իր գուրգուրանքին ջերմութեամբը: Կը գլխարկէր, կ'օգնէր, կը բժշկէր, սեղանակից ու խօսակից կ'ըլլար մեղաւորներուն, ցաւակից եւ ուրախակից՝ արհամարհուածներուն, ու գանոնք սիրոյ պարտքին տակ կը դնէր: Ի՛նք եւս օրէնքի մասին կը խօսէր եւ նոր պատուէրներ կու տար. բայց ոչ թէ որպէս օտար եւ անհաղորդ մէկը, որ քու վրագ բեռ մը կը դնէ իր սեփական շահերէն մեկնած, այլ իբր բարեգութեայ մը, որ իր գաւազներուն յանձնարարութիւններ կ'ընէ: Եւ ասոնք յօժարութեամբ կ'ընդունին այդ խրատականները, նոյնիսկ եթէ դժգոհ մնան առաջին հերթին, որովհետեւ այն ներքին վստահութիւնը ունին, թէ իրենց իսկ բարիքին համար առաջարկուած են՝ զիրենք սիրող անձի մը կողմէ: Այսքանը բաւարար էր արդէն, որ մարդիկ կապուէին, սիրէին ու փնտուէին այս նոր ուսուցիչը, սքանչելի վարդապետը:

Բ. — Այս դրուագին մէջ կը դիտենք որ Քրիստոս ԿԸ ԲԺՇԿԷ ՀԻԻԱՆ ԴՆԵՐԸ ԵՒ ԿԸ ԿԵՐԱԿԵՐԷ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ: Այս երկուքը մէկ հիմնական իրողութեան արտայայտութիւններն են, զոր ինք ամբողջ կեանքով ու գործով կը յայտնէ: Յիսուս երկրի վրայ Աստուծոյ նախախնամութիւնը կը մարմնաւորէ: Իրմով Արարիչն է որ կը խոնհարի դէպի մարդը, անոր հանդէպ իր սէրն ու գուրգուրանքը եւ խնամածութիւնը երեւելի ձեւով եւս ցուցնելու համար, զայն ուղղելով եւ առաջնորդելով, բժշկելով ու կանգնեցնելով: Աստուած գիտէ որ մարդիկ ապրելու համար պահանջներ ու կարիքներ ունին, եւ աշխարհը լեցուցած է անհամար բարիքներով: Բայց շատեր յաճախ կը մոռնան, թէ իրենց վայելած ամէնօրեայ օրհնութիւնները պարգեւն են սիրող Հօր մը հոգածութեան: Քրիստոս այդ հինգ հազարը հրաշալիօրէն կերակրելով՝ ցոյց կու տայ, թէ ի՛նքն է Տէրը բնութեան բոլոր բարիքներուն, եւ թէ գանոնք իրեններուն կը շնորհէ իր ուզած ատեն՝ յարմար դատած ձեւով:

Գ. — Յիսուս իր աշակերտներուն կ'ըսէ. «ԴՈՒՔ ՏՈՒՆԷՔ ԻՐԵՆՑ ՈՒՏԵՆԼԻՔԸ»: Չի թողուր որ ժողովուրդը շրջակայ գիւղերը երթայ, որովհետեւ կ'ուզէ Աստուծոյ նախախնամութեան առնչութեամբ փառաւոր դաս մը տալ ներկաներուն: Բայց, միաժամանակ, կը փափաքի իր աշակերտներուն սորվեցնել, թէ որպէս հետագայ առաջնորդները իր եկեղեցիին՝ պէտք է իրենք մտահոգուէին իրենց հօտին կարիքներով, եւ լեցնէին անոր հոգեւոր ու մարմնաւոր պէտքերը: Հովիւը իրաւունք չունի ձգելու, որ ծուխերը իրենց պէտքերը բաւարարելու համար՝ իյնան այս կամ այն կողմը: Անոր հիմնական պարտաւորութիւնն է հօ-

տը տանիլ դէպի դալար արօտավայրեր եւ հանգիստ ջուրեր, որ ան կարենայ յազեցում ու խաղաղութիւն գտնել: Քրիստոս, որպէս «իրաւ հովիւը», ի՛նք գործնական օրինակը կու տայ արդէն, բայց միեւնոյն ատեն խօսքով ալ կը յիշեցնէր եւ կը դաստիարակէր իր հետեւորդներուն ապագայ ղեկավարները:

Դ. — Ի վերջոյ, հինգ հազար հոգիի կերակրելէն ետք, տակաւին ահազին կտորուանքներ աւելցան հացէն եւ ձուկէն, 12 կողով լեցնելու չափ: Վստահաբար Քրիստոս ի՛նք պատուիրեց որ մնացորդները հաւաքուին, ատով աւելի բացայայտ դարձնելու համար հրաշքին մեծութիւնը, աստուածային միջամտութեան հաւաստիքը: Ուզեց որ մարդիկ շօշափելի ձեւով տեսնեն, ճանչնան ու հաւատքով գիտնան թէ ԱՐԱՐԻՉՆ է ԱՄԷՆ ԻՆՉ ՅԱՌԱՋ ԲԵՐՈՂԸ ԵՒ ԱՃԵՑՆՈՂԸ, եւ թէ իր ներկայութեան մեր ունեցածները ա՛յնքան կ'առատանան, որ կը բաւեն բոլորին ու նոյնիսկ կ'աւելնան:

* * *

Ի՞նչ կ'ըսէ եւ ի՞նչ կը թելադրէ մեզի վերոյիշեալ դրուագը՝ այսօր:

1. — Անիկա նախ մեր առջեւ հարց կը դնէ, թէ ՄԵՆՔ ՈՐՔԱՆՈՎ ԿԸ ՃԱՆՁՆԱՆՔ ՄԵՐ ՏԷՐԸ: Թէ արդեօք իր անձը, գործը, խօսքը, գոհագործուող սէրը եւ այս վերջինին յաւիտենական կանչը ի՛նչ չափով հասած են մեզի ու գրաւած մեզ. որովհետեւ անկէ՛ կախում ունի Քրիստոսի դիմելու եւ իրմով մեր հարցերուն պատասխանը գտնելու մեր տրամադրութիւնն ու պատրաստակամութիւնը:

2. — Անիկա մեզի կը յիշեցնէ թէ այսօր եւս ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒԻՆԸ ԿԸ ՄԱՐՄՆԱԻՈՐԷ: Իր անձին ընդմէջէն մենք գԱստուած կը ճանչնանք, եւ կ'ընդունինք այն բարիքները, որոնք կը լեցնեն մեր մարմնաւոր թէ հոգեւոր կեանքերը:

3. — Անիկա գործնապէս մեզի կ'ըսէ թէ ՅԻՍՈՒՍ է ԿԵԱՆՔԻ ՀԱՅՑԸ, որ կը կերակրէ ու կը կշտացնէ, եւ անոր եկողը բնաւ պիտի չանօթենայ (Յովհ. 9. 35), որովհետեւ պիտի գտնէ ամբողջական ու լեցուն կեանքը, որուն աղբիւրը Քրիստոս ինքն է:

4. — Ի վերջոյ, այս դրուագը մեզի կը պատգամէ որոնել կեանքի այդ հացը, ՓՆՏՈՆԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒԻՆԸ, որովհետեւ անիկա ոչ միայն կը յազեցնէ, այլեւ մեզ կը բաւարարէ ամէն ինչով: Անով մեր պէտքերը գոհացում կը գտնեն, որովհետեւ Յիսուսի ներկայութեան ամէն ինչ կ'առատանայ եւ կը գեղու:

Հետեւաբար, եկէ՛ք այսօր Քրիստոսի ետեւէն երթանք, զինք փնտռելու, մեր գոյութեան անապատին մէջ իրմով սնանելու եւ մեր կեանքերը իր օրհնութեան ենթարկելու համար. որպէսզի ճանչնանք Աստուծոյ իսկական բարիքները ու զանոնք վայելենք թէ՛ հոս եւ թէ հանդերձեալին մէջ:

ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

«ԱԿԱՆՁ ՈՒՆԵՑՈՂԸ ԹՈՂ ԼՍԷ՛»

Քանի մը անգամ Յիսուսի կողմէ գործածուած նախադասութիւն մըն է ստիկա, զոր աւետարանիչներ հարազատօրէն վերարտադրած են, Անոր կատարած քարոզութեան կամ ներկայացուցած առակին որպէս եզրափակում արձանագրելով զայն:

Յովհաննէս Մկրտիչի պատգամաւորները Յիսուսի կը մօտենան հասկնալու համար թէ ի՞նք է Մեսիան՝ Փրկիչը: Ան մէջբերելով Նաայիրի մարգարէութեան այն բաժինը ուր վկայութիւն կայ գալիք հրաշագործ Փրկիչին մասին (հմմտ եւ 35.5-6. եւ 61. 1), խօսքը կ'աւարտէ ըսելով. «Ականջ ունեցողը թող լսէ» (Մտ 11-15): Այլ առիթով մը, Աստուծոյ խօսքը լսող տարբեր տեսակի մարդոց օրինակը Սերմնացանին Առակով մատչելի դարձնելէ ետք, որպէս եզրափակում դարձեալ կ'ըսէ. «Ականջ ունեցողը թող լսէ» (Մտ 13. 9, Մր 4. 9, Ղկ 8. 8): Ուրիշ տեղ մը, Որոմներու Առակով աշխարհի վախճանի անցուդարձերուն մասին կանխաւ տեղեկութիւններ փոխանցելէ, ու արդարներուն վայելելիք երջանկութիւնը նախագուշակելէ ետք անգամ մը եւս կ'ըսէ. «Ականջ ունեցողը թող լսէ» (Մտ 13. 43): Նախնիքներու աւանդութիւնները տառացիօրէն չպահելու պարագային Աստուծոյ փրկութեանէն զրկուելու մտավախութիւնը ժողովուրդէն հեռացնելով, կը հաստատէ որ «ինչ որ դուրս կ'ելլէ մարդէն՝ ա՛յն է որ կը պղծէ մարդը» (Մր 7. 15), եւ իբրեւ հաստատական եզրափակում կ'ըսէ. «Ականջ ունեցողը թող լսէ» (Մր 7. 16): Իր համը կորսնցնող աղին անպէտ դառնալը կանխաւ ցոյց տալով, անգամ մըն ալ կ'ըսէ. «Ականջ ունեցողը թող լսէ» (Ղկ 15. 35): Յայտնութեան գիրքին մէջ ալ քանի մը տեղ հեղինակը օգտագործած է միեւնոյն ոճը (Յյտ 2. 7, 11, 17 եւ 29, 3. 6 եւ 22):

Ինչքան ալ որ ժամանակի լեզուական ազդեցութիւնը կրած ըլլայ այս նախադասութիւնը, այնուամենայնիւ խորունկ իմաստ մը ունենալէ չէ դադրած, իբրեւ Յիսուսի մտածողութեան մէջ իւրայատուկ տեղ ունեցող գաղափար: Աստուածորդիին աշխարհ գալը վերջին միջոցը չէր Աստուծոյ Փրկագործական Ծրագրին մէջ, սակայն Անիկա՝ Յիսուս, այն «քար»ն էր, զոր շինողները մերժեցին գործածել, բայց ինք անկիւնաքար եղաւ, ոմանց կանգնման եւ ոմանց գլորման պատճառ ըլլալով (հմտմտ Մտ 21. 42): Այնուհետեւ ով որ անոր զարնուէր պիտի խորտակուէր, եւ ան՝ որուն վրայ ինչար պիտի ճգմուէր (հմմտ Մտ 21.43): Ահա թէ ինչո՞ւ կը գործածէ Յիսուս «Ով որ ականջ ունի թող լսէ» ասոյթը, որպէս եզրափակում իր խօսքերուն: Մարդը փրկելու ծրագիրը, Քրիստոսի կատարած զոհողութեամբ՝ յաջողութեամբ կը պսակուէր, աշխարհի սկիզբէն ի գործ դրուած ծրագիրը կ'ամբողջանար ու իր լրման կը հասնէր: Ալ այնուհետեւ միայն Աստուծոյ խօսքին ունկնդրութեամբ ու Անոր Որդւոյն մարդեղութեան հաւատալով էր որ փրկութեան պիտի հասնէր մարդը: Նոր մարգարէներ իբրեւ պատգամաբերներ պիտի չյայտնուէին, երբ Աստուծոյ Բանը (խօսքը) ի՛նք յայտնուած է իբրեւ մարդ, ուղղակիօրէն մարդոց

ականջներուն քարոզելով յաւիտենական ճշմարտութիւնները:

Խօսակցական լեզուի մէջ ալ յաճախակի առիթներով օգտագործուող նոյնանման ասոյթներ կը գործածենք, երբեմն վստահ ըլլալու համար թէ տուեալ անձը լսե՞ց մեր ըսածը, կամ՝ երբեմն հաստատելու համար որ յստակ հասկցուած է մեր տուած բացատրութիւնը: Այսպէս, ուսուցիչը դասանիւթ մը ներկայացնելէ ետք վստահ ըլլալու համար որ բոլոր աշակերտներն ալ ընկալեցին իր մատուցածը՝ կ'ըսէ. «Լսեցի՞ք», «Հասկցա՞ք», «Պարզ էր»: Կամ՝ յայտարարութիւն մը կատարելէ ետք նոյնը կ'ըսէ, հաստատելու համար թէ բոլորն ալ լսեցին իր կատարած յայտարարութիւնը: Իսկ ազդարարութիւն մը կատարելէ ետք, ան աւելի՛ շեշտուած հարցականով մը կ'ըսէ. «Բոլորդ ձեր ականջներով լսեցի՞ք»: Կամ նոյնին հաստատական դարձուածքով կ'ըսէ. «Ահա ձեր ականջներով լսեցիք ըսածներս»: Շատ բնական է որ ականջներով պիտի լսէին, սակայն ազդարարութեան աւելի եւս կշիռ տուած ըլլալու համար ու զանիկա առաւել ազդու դարձուցած ըլլալու համար, կը գործածէ այդ ոճը, որ արդէն ընթացիկ խօսակցութեան վերածուած է: Մայրենի լեզուին տիրապետող ու չտիրապետող անձեր հաւասարապէս կը գործածեն «Հասկցողին շատ բարեւ» տարբերակը, որ իրենց ըսել ուզածին յստակութեան մասին վկայութիւն մըն է միանգամայն:

Հին կտակարանի Առակաց գիրքին մէջ Յիսուսի օգտագործած ասոյթին նման նախադասութիւն մը կայ. «Կեանքի յանդիմանութիւնը լսող ականջը, իմաստուններուն մէջ պիտի բնակի (Առ 15. 31): Բացայայտօրէն այստեղ ականջը չէ գործածուած իբրեւ սոսկ լսողութեան գործիք, այլ՝ միաժամանակ նաեւ իբրեւ ըմբռնելու, հասկնալու, իմանալու կարողութիւն ունեցող զգայաբանքի տէր մարդ:

Առօրեայ կեանքին մէջ բազմաթիւ են անոնք, որոնք կը լսեն բայց չեն իմանար: Ոմանք կը լսեն, բայց չեն ուզե՛ր իմանալ: Ուրիշներ ալ կան, որոնք կը լսեն, կ'իմանան սակայն լսած չեն ըլլար: Տարբեր տեսակի խառնուածքով օժտուած անձեր են ասոնք, որոնք տարբեր աշխարհայեացքներով կը բնորոշուին:

Առակաց գիրքին մէջ յիշուած «Կեանքի յանդիմանութիւնը» տարբեր իմաստներ ունի, յարաբերաբար գործածութեան: Մարդկային թերութիւններէն մին է կեանքէն դաս քաղել չսորվիլը եւ անցեալի սխալները դարձեալ ու դարձեալ կրկնելը: Իմաստուն հեղինակը յիմարներուն կարգին կը դասէ այն «ականջը», որ կեանքի յանդիմանութեան դիմաց կը փակէ իր թմբուկը, մերժելով ու ետ մղելով խրատական ձայնին ալիքները:

Իսկ Յիսուս, իր մարդեղութեամբ, չի կրնար պատկերացնել որ այլեւս գտնուի մարդ որ «ականջ» չունենայ: Սակայն «Ականջ ունեցողը թող լսէ»ի նման անորոշ հաստատականով մը եզրափակելով իր խօսքը, կը մատնացուցէ այնպիսի անձեր իր շրջապատին մէջ, որոնք կը ճանչնային զինք՝ առանց ճանչնալ ուզելու: Կը տեսնէին իր կատարած հրաշագործութիւնները, գաղտագողի նայելով իրենց մատներուն մէջէն, դէմքերնին երկու ձեռքով փակած ըլլալով: Կը կսէին զինք՝ առանց լսել ուզելու, խլութիւնը աւելի նախընտրե-

լով լսողութեան հրաշալի կարողութենէն, որով անխօս ու ֆիլմաշխարհի առաջին շրջանի շարժանկարներուն մէկ նմանութիւնը եղող աշխարհը, ձայնային կենդանութեամբ ներկայ պիտի ըլլար իրենց համար: Կ'իմանային իր ըսածները, այնպէս ձեւացնելով որ բնա՛ւ չեն հասկնար, նման այն հտպիտին որ բոլոր հանդիսատեսներուն ծիծաղին կ'արժանանայ իր կատարած բռնագբօսիկ թիւրիմացութիւններով եւ իրեն ուղղուած հարցումները դժուարաւ ըմբռնելու կեղծ տկարութեամբ:

Քրիստոնէական բարոյական կեանք մը ապրելու համար ինչքա՛ն անհրաժեշտութիւն է «բարոյական ականջ» ունենալը, որ սովորական ականջին լսածները մաղելու կարողութիւնն է մարդուն մէջ եւ անոր հոգեկան լսելիքը դէպի աստուածային պատուիրանները դարձնող ուղղութիւնը:

Լսելու ականջ ունի՞ս որ նաեւ մաղելու մաքուր բամպակով օժտուած է, որովհետեւ առանց ատոր կը միանաս այն խումբին՝ որոնց համար Յիսուս կ'ըսէ. «Ականջ ունեցողը թող լսէ»:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆ



ՇՆՈՐՀԸ

Շնորհը Աստուծոյ անձնական դիրքաւորումն է մարդուն հանդէպ, իր ազդեցութիւնն ու ներգործութիւնը անոր վրայ: Քրիստոնեաներու համար, շնորհը ճշգրտօրէն բացայայտուած եւ մասնակցուած է, Յիսուս Քրիստոսի պատմական անձով: Սրբազան Պօղոս Առաքեալն էր առաջին քրիստոնեայ հեղինակը որ շնորհը դարձուց կեդրոնական բառ աստուածաբանութեան մէջ: Charis բառը որ կը նշանակէ բարիք գործածուեցաւ իր կողմէ իբր հոմանիշ մը Աստուծոյ սիրոյն: Անոր ինքնակամ դիրքաւորումն է ու առանց պատճառի կատարած բարիքը՝ ըստ որոնց կը մեծարէ մարդ արարածը, լիովին կը բացայայտուի Նազովրեցի Յիսուսի կեանքին, խօսքին, արարքին, մահուան ու Յարութեան մէջ. «Յայտնեաց Աստուած զսէրն իւր ի մեզ, զի մինչդեռ մեղաւորքն էաք Քրիստոս վասն մեր մեռաւ» (Թուղթ առ Հռովմայեցիս Ե. 8): Այս սէրը մեզմէ կը պահանջէ պատասխան մը՝ հաւատքը, որ է մեր անձին ընծայումը, ենթարկումն ու հնազանդութիւնը՝ Աստուծոյ Քրիստոսի միջոցաւ: Պօղոս Առաքեալի ամբողջ բանաձեւը կ'երեւի նախադասութեան մը մէջ, հաւանաբար զրի առնուած իր աշակերտներէն մէկուն կողմէ. «Զի Շնորհօք նորա էք փրկեալք ի ձեռն հաւատոցն. եւ այս ոչ ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգեւ է. ոչ ի գործոց, զի մի՛ ոք պարծեսցի» (Թուղթ առ եփեսացիս Բ. 8): Շնորհը (սէր), բացայայտուած Քրիստոսով, գրաւելով մեր կամեցողութիւնը հաւատք կը յայտնաբերէ մեր մէջ, եւ ոչ թէ նոր կարողութիւն մը կը մտցնէ հոն: Հաւատքը՝ մեր պարզ կամեցողութենէն անդին՝ նուէր մըն է անոր, որմէ ան ոգեկոչուած է: Այս փրկարար հաւատքը պէտք չէ շփոթուի այն մասնաւոր հաւատքին հետ, որ հոգւոյն նուէրն է. (a Charisma) «հաւատքը որ լեռները կը տեղափոխէ» (Թուղթ առ Կորնթացիս ԺԳ. 2), եւ ոչ ալ այն հաւատքին հետ որ կերպարան է «հոգւոյն պտուղին» (Թուղթ առ Գաղատացիս Ե. 22) որ է ճշմարտութիւն կամ հաւատարմութիւն: Փրկագործ հաւատքը շնորհքին մասնակցելու վիճակին մէջ կը դնէ մեզ, «որով եւ զընծայութիւնն իսկ ընկալաք հաւատովք ի շնորհս յայտոսիկ յորում կամք...» (Թուղթ առ Հռովմայեցիս Ե. 2):

Մենք շնորհին հետ հաստատուն կը մնանք, որովհետեւ հաւատքը մեզ կը միացնէ Քրիստոսի հետ, շնորհիւ իր մահուան, թաղման եւ յարութեան (Թուղթ առ Հռովմայեցիս Զ. 1-11): Քրիստոսի հետ այս միութիւնը կը ձեւակերպէ մեր կեանքը Քրիստոսի նմանութեամբ: Շնորհը իբր Աստուծոյ անձնական կերպարանքի ներգործութիւնը Քրիստոսով՝ հոմանիշ կը դառնայ Քրիստոսի Հոգիին համար (Աստուծոյ Հոգին, Սուրբ Հոգին): Շնորհը, իբրեւ Սուրբ Հոգի՝ կը վերաստեղծէ մեզ, Աստուծոյ անձնական կերպարանքէն ներգործող գործութեամբը՝ իրականացնելով մեր ստեղծագործուած կարողութիւնները եւ առաջնորդելով մեզ դէպի այն՝ որ Աստուած մտադրած է որ ըլլանք: Սուրբ Պօղոս, շնորհին պարգեւը կը համարէ իր նոր էութիւնը՝ իբր Առաքեալ մը, որ է հակապատկերը իր նախկին էութեան՝ իբրեւ եկեղեցւոյ թշնամի. «Զի ես իսկ եմ տրուպն առաքելոց. որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ, զի հալա-

ծեցի գեկեղեցին Աստուծոյ: Այլ շնորհօքն Աստուծոյ եմ գինչ եւ իցեմ, եւ շնորհք նորա որ յիս ընդունայն ինչ ոչ եղեն. այլ առաւել քան զնոսա ամենսին վաստակեցի, եւ ոչ եթէ ես՝ այլ շնորհքն Աստուծոյ որ ընդ իս» (Թուղթ առ Կորնթացիս ԺԵ. 9-10): Մէկ խօսքով, Աստուծոյ անձնական դիրքաւորումը շնորհի հանդէպ բացայայտուած Քրիստոսի մէջ եւ մասնակցուած հաւատքով, կը դառնայ մեր մէջ ձեւափոխուած անձնական ներգործութիւն, աւելցնելով մեր տաղանդը, տալով մեզի նկարագրի նոր յատկանիշներ եւ նոր աշխատանք մը: Բայց եւ այնպէս այս մեր անձնական ձեռնարկն է եւ շնորհը հեղինակութեամբ մը չի կոխկռտեր մեր ազատ կամեցողութիւնը: Շնորհով լեցուած արարածը, այն ազատ մարդ էակն է որ կը կատարէ ինչ որ կը փափաքի ու կը կամենայ, քանի որ ան կը փափաքի ու կը կամենայ Աստուծոյ նպատակը որ այլեւս իր անձնական նպատակը դարձած է:

Որովհետեւ մեր մասնակցութիւնը այս շնորհին (Աստուածային բարիք) մէջ կը վերականգնէ ու կ'ամբողջացնէ մեր սկզբնական բնութիւնը, շնորհը՝ կ'ըմբռնուի ըլլալ գետինն ու աղբիւրը բոլոր գոյութեանց: Ստեղծագործութիւնը, ինչպէս նաեւ փրկագործութիւնը՝ կը կատարուի շնորհի միջոցաւ: Ամէն պատահական գոյութիւն, կը հոգացուի Աստուծոյ շնորհով: Շնորհը, ուրեմն, կ'ըլլայ նաեւ մեր երախտագիտական բառը՝ առ Աստուած, գործրինակ երբ կ'ըսենք. «շնորհ դէպի մարմին» (grace a meat), հոս charis բառը կը ներկայանայ որպէս սբ. հաղորդութիւն (eucharist) իմաստով, անուն մը, քրիստոնէական պաշտամունքի կեդրոնական պատարագին, որուն մէջ Աստուծոյ ստեղծագործութեան շնորհը մեր գոյապահպանման եւ փրկագործութեան մէջ, կը պատասխանուի մեր անձին ու մեր հսկողութեան ներքեւ գտնուող բաներուն նուիրումովը առ Աստուած:

Աւետարանը՝ Աստուծոյ շնորհով կատարուած հզոր գործերուն արձանագրութիւնն է: Աստուծոյ կատարած այս գործը մարդուն համար ու մարդուն մէջ է: Եկեղեցին, այս հզոր գործերուն հռչակումով՝ Քրիստոսով հասած իր գազաթնակէտին եւ հոգւոյն մասնակցութեամբ միայն կը կարողանանք մասնակից դառնալ շնորհի պարգեւներուն: Շնորհը կու գայ ու ներգործող կը դառնայ մեր կեանքի մէջ «շնորհի միջոցներով» որ է խօսող, ապրող վկայութիւնն ու եկեղեցւոյ սրբազան գործունէութիւնը, որուն լաւագոյն օրինակը կը հանդիսանայ Աւետարանը:

Քրիստոնեաներ կրնան խօսիլ Ստեղծագործութեան, Պահպանութեան, Մարդեղութեան, Քաւութեան, Սուրբ Հոգւոյն, Բանին, Սուրբ Հաղորդութեան եւ վերջին կատարածներու մասին, բայց մենք, միշտ պէտք է յիշենք որ շնորհը՝ Աստուծոյ անձնական դիրքաւորումը, ազդեցութիւնն ու ներգործութիւնն է: Եւ բազմաթիւ յայտնութեանց մէջ՝ միակ շնորհը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի շնորհն է:

A. T. MOLLEGEN
Թարգմ.՝ Բ. Թ.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ

Ռոմերո արքեպիսկոպոսի նահատակութեան
25-րդ տարելիցի առթիւ

1980 թուականի մարտի 24-ին էր: Սան Սալվադորի հոգեւոր առաջնորդ՝ արքեպիսկոպոս Օսկար Առնուլֆօ Ռոմերօն սուրբ Պատարագ էր մատուցում:

Փոքրահազմ, հանդարտաբարոյ եւ ժողովրդի հետ շփուելիս մի քիչ ամաչկոտ այդ եկեղեցականի կատարած ծէսերին հաւատացեալները սիրում էին խոռոններամ բազմութեամբ ներկայ գտնուել, քանզի նրա դէմքից սրբութիւն էր ճառագում՝ ջինջ հաւատի յորդառատ լոյսը, որը ջերմեռանդութեան զգացումներով էր լցնում ներկաների հոգին: Նրա քարոզները բոցաշունչ էին, համարձակ, անկեղծ եւ անմիջական:

Այդ օրը արքեպիսկոպոս Ռոմերօն, նախապատրաստական աղօթքներից յետոյ՝ իւրայատուկ ներշնչումով սկսեց իր քարոզը եւ, ի միջի այլոց, ասաց.

«Մարդն իր անձը չպէտք է այնքա՛ն շատ սիրի, որ փորձի միշտ խուսափել կեանքի ընթացքում հանդիպող վտանգները դիմադրուելուց: Ընդհակառակը, նա ով յանուն Քրիստոսի, նոյնիսկ իր սեփական անձի ապահովութիւնը վտանգում է ի ծառայութիւն իր մերձաւորի, ի պաշտպանութիւն նրա իրաւունքների, այդպիսին կ'ապրի, ինչպէս ցորենի հատիկը, որ գետին ընկնելով՝ մեռնում է, սակայն միայն երեւութապէս է մեռնում: Եթէ այդ հատիկը չմահանայ՝ ինքն առանձին կը մնայ, իսկ եթէ հունձք կայ՝ նշանակում է, որ հատիկը դրա համար զոհել է ինքն իրեն՝ ընկնելով հողի մէջ»:

Նա ապա շարունակեց. «Քրիստոսի պատարագուած այս մարմինն ու վասն մարդկութեան հեղած արիւնը՝ մեզ համար թող լինեն հոգեւոր սնունդ, որպէսզի մենք էլ նրա նման տանք մեր մարմինն ու արիւնը՝ մեղմելու համար ժողովրդի վիշտն ու տառապանքը: Չապրենք մենք մեզ համար, այլ լինենք արդարութեան օրինակ եւ խաղաղութեան պատգամաբեր մեր ժողովրդի համար...»:

Այդ պահին լսուեց կրակոցի ձայն...

Արքեպիսկոպոսը դեռ շատ ասելիք ունէր, բայց չհասցրեց: Չհասցրեց նոյնիսկ հաղորդուել Յիսուսի կենարար մարմնով եւ արեամբ, այլ հենց ինքը, իր մատուցած Պատարագի ընթացքում, դարձաւ զոհ՝ արիւնլուայ ընկնելով սուրբ Խորանի վրայ:

Երկրի՝ էլ Սալվադորի տառապած ու կեղեքուած ժողովուրդը սգաց իր սիրելի հոգեւոր առաջնորդի դառնակսկիծ մահը: Նոյնիսկ նրա գլխաւոր հակառակորդներից շատերը, լինեն դրանք ծայրայեղ աջակողմեան կամ յեղափոխական տարրեր, գլուխ խոնարհեցին նրա սրբազան յիշատակի առաջ: Նրա շիրիմը դարձաւ համազգային ուխտատեղի:

Ռոմերո արքեպիսկոպոսին չէին հանդուրժում օրուայ իշխանաւորները, որոնք մեծ մասամբ դրածոներ էին երկրի օլիգարխների: Վերջիններս բռնանում էին պարզ ժողովրդի վրայ, խլում նրա արդար վաստակը, արգելք էին հանդիսանում նրա տնտեսական ու մշակութային զարգացմանը, որպէսզի միշտ կա-

րողանան շահագործել եւ ստրկութեան մէջ պահել այդ հսկայ զանգուածին: Այդ պատճառով էլ հալածում կամ սպանում էին կրօնական ու աշխարհական այն գործիչներին, որոնք անկեղծ նուիրումով փորձում էին պաշտպանել իրաւագրկուածներին շահերը եւ ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածում:

Ձախակողմեան ուժերն էլ դժգոհ էին արքեպիսկոպոսից, քանի որ նա բոլորովին դէմ էր մարքսիստական գաղափարախօսութեանը եւ զինուած պայքարին: Նա չէր ուզում արիւնահեղութեամբ իշխանափոխութիւն կատարել եւ մի բռնապետութիւնը միւսով փոխարինել: Նա պայքարում էր խաղաղ միջոցներով սթափեցնել բռնաւորների խիղճը՝ մատնանիչ անելով նրանց անմարդկային եւ, հետեւաբար, հակաքրիստոնէական արարքները:

Բարեբախտաբար, պէտք է ասել, որ ժողովրդի եւ կղերականների մեծ մասը հաւատարիմ մնաց իր սիրելի առաջնորդին: Վերջինս, սակայն, հիասթափուել էր Վատիկանի քաղաքականութիւնից՝ ասելով, թէ ուրիշ անգամ էլ ինքը չի գնայ Հռոմ, քանի որ այնտեղ բարեկեցիկ պայմաններում ապրող կրօնական ղեկավարներին երբեք չէր յուզում հալածուածների դառը ճակատագիրը:

Տնտեսական բազմաթիւ ազդեցիկ շրջանակներ, ինչպէս նաեւ մի քանի փափկասուն եպիսկոպոսներ ու քահանաներ, գործի լծուեցին զրպարտութիւններով վարկաբեկելու Ռօմերօ արքեպիսկոպոսին՝ յաջա իր հօտի եւ Վատիկանի: Բայց արքեպիսկոպոսը կարեւորութիւն չընծայեց այդ անխիղճ յերկրանքներին եւ նոյնիսկ Վատիկանի սպառնալիքներին:

Այնուհետեւ, երբ տեսան, թէ զրպարտութիւնն ու սպառնալիքը չեն ազդում այդ քաջարի եկեղեցականի վրայ, փորձեցին կաշառել նրան: Երկրի նախագահը մի շքեղ աւտոմեքենայ նուէր ուղարկեց նրան, սակայն Ռօմերօն մերժեց ընդունիլ այն: Նա իր խղճին ու սկզբունքին դէմ էր համարում թշուառ մարդկանց կեղեքողների ձեռքից որեւէ նուէր ստանալը, ինչպէս նաեւ էլ Սալվադորի նման մի երկրում, ուր ժողովուրդի մեծամասնութիւնը աղքատ է, նման մի մեքենայով շրջելը կամ ճոխ պայմաններում ապրելը:

Արքեպիսկոպոսի համոզմամբ իւրաքանչիւր քրիստոնեայի գլխաւոր պարտականութիւնն է խեղճերին եւ իրաւագրկուածներին պաշտպանելը: Աստծուն միացած անձը չի կարող անտարբեր լինել ուրիշի նկատմամբ: Նա իրաւունք չունի մորթապաշտ լինել եւ բռնութիւնների ու անարդարութիւնների դիմաց լուռ մնալ: Մանաւանդ քրիստոնեայ հոգեւորականը պէտք է լինի անկաշառ, արդարասէր եւ արդարատենչ: Կրօնական վերնախաւի վատ օրինակները երիտասարդ ու նորընծայ հոգեւոր սպասաւորների համար երբեք չպէտք է լինեն գայթակղիչ կամ յաջողութեան չափանիշ: Յատկապէս այսօր, քրիստոնեայ հոգեւորականը, իր հոգեբանութեամբ ու կենցաղով, պէտք է տարբեր լինի աշխարհական իշխանաւորներից կամ սովորական մահկանացուից, որպէսզի կարողանայ առաջնորդել, պաշտպանել, օգնել եւ փրկել նրանց:

Բայց մենք վախենում ենք հենց դրանից, ուրիշներից տարբեր լինելուց, որպէսզի ոչ ոք չխանգարի մեր հանգիստը, ոչ ոքի հետ խնդիր չունենանք, այլ միայն մեր անձնական ապահովութեան ու հանգստի մասին մտածենք:

Դրա համար էլ երբեք չզարմացայ, երբ անցեալները, մամուլում, կարգացի մի տարեց եկեղեցականի խօսքը իր յորեկեանի առթիւ, ուր ասում էր. «Եթէ հնարաւոր լինի նորից ծնուել, ես դարձեալ պիտի ուզէի կրօնական դառնալ, քանի որ իբրեւ այգպիսին ես մեծ դժուարութիւնների չեմ հանդիպել, ջանացել եմ միշտ խուսափել որեւէ մէկի հետ խնդիր ունենալուց եւ շարունակ արժանացել եմ իմ շրջապատի յարգանքին ու պատուին»:

Կ'ուզենայի ասել այս աշխարհում խուսանաւելու գերաշնորհութեամբ օժտուած նման վսեմաշուք եկեղեցականներին, որ լաւ կը լինի, եթէ իրենք ձեռք քաշեն քրիստոնէութիւնից, քանզի ինչպէ՞ս կարելի է չտանջուել, դժուարութիւնների եւ երբեմն նոյնիսկ հալածանքների չհանդիպել, երբ Քրիստոսի մարդասիրական պատգամն եւ քարոզում մի այնպիսի միջավայրում, ուր բարքերի ապականութիւնը խեղդում է թշուառների, սննդակարօտ երեխաների, արհամարհուած բազմաթիւ մտաւորականների ճիչն ու աղաղակը, ուր կեղծիքն ու շողոքորթութիւնը բեմ են բարձրանում, ուր օրաւոր նահանջում է մայրենի լեզուն, ազգային արժէքների հանդէպ յարգանքն ու նախանձախնդրութիւնը:

Եթէ ճշմարտութիւնն ասելու լինես, կառուցողական քննադատութիւններ անես, վստահաբար պիտի ենթարկուես ազգիդ վատասիրտ վերադասների դաժան հալածանքին: Նախ պիտի փորձեն սպառնալիքներով վախեցնել քեզ, ապա՝ կաշառել ինչպէս որ վարուեցին Ռօմերօ արքեպիսկոպոսի հետ, իսկ չկաշառուելու դէպքում կը սկսեն զրպարտել քեզ, արհամարհել կամ ծաղր ու ծանակի ենթարկել: Կարող է պատահել, որ մերձաւորներդ անգամ քեզ քննադատեն, որ ճկուն չես, դիւանագիտութիւն չունես, բայց դու չպէտք է յետ նայես. «Ոչ ոք ձեռքը մաճի վրայ կը դնի եւ ապա յետ կը նայի» (Ղուկաս Թ՝ 62), չպէտք է կոչմանդ եւ Աստուծոյ դաւաճանես, չպէտք է վախենաս չհասկցուելուդ կամ լքուածութիւնից, զի մեր Տէրն էլ խաչի վրայ լքուած էր իր սիրելի աշակերտներից, բայց նա յաղթեց աշխարհին, այսինքն՝ մեղքին, մահուան ու սատանային:

Քրիստոնեայ լինել չի նշանակում անպայման անփորձանք կեանք ունենալ, փափկութեան ու վայելքի մէջ ապրել: Սկզբից եւեթ քրիստոնէութեան հիմնադիրը շատ պարզ ու յստակ ասել է. «Աշխարհում նեղութիւն պիտի ունենաք»: Ի հարկէ մենք չենք փնտռում նեղութիւն կամ տառապանք, բայց դրանք այս աշխարհում մեզ բաժին են դառնում: Հարցը նրանում չէ, թէ ինչպէ՞ս դիմագրաւենք դրանք, ո՞ւմ հետ պէտք է դաշնակցենք: Արդարեւ մեր միակ դաշնակիցը նա է, ով յաղթեց աշխարհին, մեղքին, մահուան ու սատանային:

Մենք էլ, միացած Քրիստոսին եւ զօրացած նրանով, քրիստոնէական սրբազան յանձնառութեամբ մեր կեանքը ի սպաս դրած մեր ազգի բարօրութեանը, մի օր էլ անպայման իրաւունք կ'ունենանք Տիրոջ նման պատգամել գալիք սերունդներին. «Քաջալերուեցէ՛ք, մենք յաղթեցինք աշխարհին»:

Իսկ Սան Սալվադորի արքեպիսկոպոս Ռօմերօն եղաւ ճշմարտապէս այս աշխարհին յաղթող երանելի վկաներից մէկը:

ՅԱԿՈՒ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՀԱՆԳԻՍԸ (Այգուց, Եօթնօրէք, Քառասունք եւ Տարեկից)

Ի՞նչ է ՀՈԳԵՀԱՆԳԻՍԸ ԵՒ ՈՐՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ

Հոգեհանգիստը ողջերուն երախտագիտութեան արտայայտութիւնն է ննջեցեալին նկատմամբ: Հոգեհանգիստը հաւատքի արտայայտութիւն է աղօթքի ճամբով: Հոգեհանգստեան աղօթքով, Աստուծմէ կը խնդրուի գուժ, ողորմութիւն եւ հոգիի խաղաղութիւն բոլոր հին եւ նոր ննջեցեալներուն համար:

Հոգեհանգստեան արարողութեան կ'երգուին յատուկ շարականներ, Աւետարան, մաղթանք, քարոց եւ «Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգուժ...» աղօթքը, որ կը բարձրանայ յիշուած ննջեցեալներուն հոգւոյն համար եւ Տէրունական աղօթքով՝ «Հայր մեր...»ով կ'աւարտի արարողութիւնը:

Եկեղեցին իր սպասաւոր եկեղեցականին ճամբով, միշտ կ'աղօթէ ներում եւ թողութիւն ունենալու Աստուածորդի Յիսուս Քրիստոսէն, իրմով ննջածներուն համար, ստանալու Աստուծոյ ողորմութիւնը եւ դառնալու Երկնքի Արքայութեան արժանաւոր ժառանգորդները:

Ս. Եկեղեցին խնդրուած հոգեհանգստեան յատուկ արարողութիւններէն անկախ, ժամերգութեանց եւ պատարագի ընթացքին իր աղօթքներուն եւ իր շարականներուն մէջ, կը յիշէ հայ ազգի ծանօթ թէ՛ անծանօթ, յայտնի թէ՛ անյայտ բոլոր ննջեցեալները:

Քրիստոնեայ բոլոր հաւատացեալները, որոնք կը հաւատան Քրիստոսի ինչեղութեան, թաղման եւ Յարութեան իրենց երկրաւոր կեանքը կը փակեն եւ կը ննջեն Քրիստոսով: Հոգեհանգստեան արարողութիւն չի կատարուիր անհաւատներուն, չմկրտուած անձերուն, անձնասպաններուն եւ կախարդներուն համար:

Ի՞նչ է ԳԵՐԵԶՄԱՆՕՐՀՆԷՔԸ

Գերեզմանօրհնէքը եկեղեցական յատուկ արարողութիւն եւ բարեպաշտական աւանդութիւն է: Արարողութիւնը կը կատարուի ննջեցեալին կամ ննջեցեալներուն պարագաներուն խնդրանքին համաձայն՝ Այգուցին (Թաղման յաջորդօրը), Եօթնօրէքին, Քառասունքին, Մեռելոցի օրերուն եւ Տարեկիցներուն:

Հայ հաւատացեալը նախօրօք կը խնդրէ իր ծխատէք քահանայէն հոգեհանգստեան արարողութիւն կատարել իր ննջեցեալին հոգւոյն համար եւ միասնաբար կ'ուղղուին գերեզմանատուն, այնտեղ ննջեցեալին շիրիմին վրայ կատարելու գերեզմանօրհնէքը:

ԻՆՉՈՒՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԹԱՂՈՒՄԻՆ ԱԻԱՐՏԻՆ ԽԱՉԱԶԵԻ Կ՝ՕՐՀՆԷ ԵՒ ԿԸ ԿՆՔԷ ՆՆՁԵՑԵԱԼԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Ննջեցեալի մը գերեզմանը թաղումին աւարտին խաչաձև կը կնքուի անշարժ պահելու անոր շիրիմը եւ ոսկորները, մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը եւ Վերջին Դատաստանը:

Գերեզման կնքելու արարողութիւնը, յատուկ է մի միայն մեր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ. ոչ Ուղղադաւան եկեղեցիները եւ ոչ ալ Կաթոլիկ Եկեղեցին ունին գերեզման կնքելու ծէսը: Բողոքական Եկեղեցին եւս ծիսական արարողութիւններ չունի, այլ միմիայն աղօթքով հողը կը ծածկէ:

ԻՆՉՈՒՒ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԵՆՔ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒՆ ՀՈԳԻՈՅՆ ՀԱՄԱՐ

Հոգեհանգիստը ննջեցելոց հոգիի խաղաղութեան եւ հանգստեան համար մատուցուող յատուկ աղօթքի արարողութիւն է, ուր ննջեցեալներուն հարազատները եւ եկեղեցական դասը եկեղեցւոյ Ատեանին մէջ, աղօթքով կը խնդրեն մեղքերու թողութիւն, հոգւոյ լուսաւորութիւն եւ Երկնքի Արքայութեան արժանանալ:

Ննջեցեալները յիշել եւ յիշատակել մեր աղօթքներուն մէջ, սրտի ու հոգիի մնայուն պարտքն է, որովհետեւ այս աշխարհին մէջ անոնք մեզի հետ մէկ ամբողջութիւն կը կազմեն: Անոնց հոգիներուն խաղաղութեան համար, հոգեհանգիստով Բարձրեալին թողութիւնը եւ ողորմութիւնը կը խնդրուի: Մեր աղօթքներուն մէջ Հոգւոյ լուսաւորութիւնը կը բաղձանք, արժանի ժառանգորդները դառնալու համար Երկնքի Արքայութեան:

ԵՐԲ ՊԷՏՔ Է ԿԱՏԱՐՈՒԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Մեր եկեղեցւոյ մէջ Հոգեհանգիստ կը կատարուի ծիսարանին ճշգրտ կարգաւորումին համաձայն, այլ խօսքով Եօթնօրէքին, Քառասունքին, Տարելիցին եւ Տարելիցներուն: Անկէ դուրս մի միայն ննջեցեալին գերեզմանին վրայ կարելի է կատարել «Մեռելոց»ի օրերուն կամ այլապէս, յատուկ փափաքով եւ խնդրանքով:

Այժմու ընդհանրացած սովորութեամբ հոգեհանգստեան արարողութիւն կը խնդրուի մի միայն մահուան Քառասունքին (մահուան քառասուններորդ օրուան յիշատակին) եւ առաջին Տարելիցին առաւելագոյնը:

Կարգ մը հաւատացեալներ, երբ իրենց ննջեցեալը իրենց մէկ երազին մէջ կը տեսնեն՝ կ'ըսեն, թէ ննջեցեալը իր հոգւոյն համար ողորմութիւն կը խնդրէ: Այդ իսկ պատճառով շուտով Կիրակի օրը Պատարագի աւարտին, հոգեհանգիստ կը խնդրեն եւ աղքատներուն ողորմութիւն կու տան իրենց սրտին փափաքին համաձայն: «Ննջեցեալին խնդրանք»ի ընդառաջումը հաւատալիք մըն է,

սրտի ու խղճի գոհունակութիւն ունենալու համար: Այս պատճառով խնդրուած հոգեհանգիստ կատարելը անպատեհութիւն չունի, որովհետեւ որեւէ հաւատացեալ կրնայ խնդրել եկեղեցականէն հոգեհանգիստ կատարելը իր ննջեցեալին հոգւոյն համար, առանց յատուկ առիթի եւ մասնաւոր պատճառի:

ԿՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒԿ ԼՈՒԿԱՆԵՐՈՒԿ ԼԱՄԱՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԼՈՒԿԱԶԱՆԳԻՍ ԿԱՏԱՐԵԼԸ ԾԻՇԴԻ Է

Հաւատացեալները պարտաւոր են աղօթել իրենց ննջեցեալներու հոգիներուն համար, որպէսզի մատուցուող Ս. եւ Անմահ Պատարագի խորհուրդին ընդմէջէն, ննջեցեալ եւ ողջ հաւատացեալները իրարու միանան ԼՈՒԿԱՆԵՐՈՒԿ ԵՒ ՔՐԻՍՏՈՍՈՎ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ շնորհիւ իրագործուած: Պատարագի ընթացքին, Պատարագամատոյցին մէջ գետեղուած յատուկ աղօթքով կը յիշուին ննջեցեալ եւ կենդանի հաւատացեալները, յիշատակելու յատուկ խնդրանքով «Յիշեա՛ Տէր եւ գեղգի ծառայիս ԲՈՅ (այս անուն), եւ ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան ԲՈՒՄ, եւ հանգ՛ այցելութեամբ ի լոյս երեսաց ԲՈՅ»: Իսկ եթէ կենդանի է «Փրկեա՛ զնա յամենայն որդայթից հոգւոյ եւ մարմնոյ»: Աղօթք եւ յիշատակում խնդրողներուն համար եւս պատարագիչը Աստուծոմէ կը հայցէ ըսելով.- «Յիշեա՛ Տէր եւ զայնուիկ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, զկենդանիս եւ զհանգուցեալս, եւ կառավարեա՛ զկամս հայցմանց նոցա եւ զմերս, ընդ ուղղորդն եւ որ լին է փրկութեամբ»: Ննջեցեալներուն ազգականներուն եւ հարազատներուն խնդրանքով միայն, եկեղեցին Կիրակի օրերուն Պատարագի աւարտին կը կատարէ հոգեհանգստեան յատուկ պաշտօն անոնց հոգիներուն խաղաղութեան համար, այլապէս եկեղեցին իր կողմէ ճշգրտօր մեռելոց օրերուն կը յիշէ զանոնք միասնաբար հին եւ նոր յայտնի թէ անյայտ բոլոր ննջեցեալները:

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ԼՈՒԿԱԶԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Հոգեհանգստեան արարողութիւնը տեղի կ'ունենայ Պատարագի աւարտին, եկեղեցւոյ Ատեանին մէջ, եկեղեցականին գլխաւորութեամբ եւ Դպրաց Դասի (հրեշտակներու խումբի ներկայացուցիչ) մասնակցութեամբ:

Հոգեհանգստեան արարողութիւնը կը կատարուի հետեւեալ եկեղեցական կարգաւորումով:

1 Սարկաւազը — «Եւ եւս խաղաղութեան...»:

2 Եկեղեցականը — «Օրհնութիւն եւ փառք Հօր...»:

3 Սարկաւազը — Խնկարկութիւն Դասին մէջ:

4 Դպրաց Դասը — «Որ յանէից ստեղծող գոյին...» կամ «Գթա՛ Տէր...»

չարականի երգեցողութիւն:

5 — Սաղմոսի ընթերցում եղանակով:

6 – Աւետարանի ընթերցում:

7 – Ս. Ներսէս Շնորհալիի «Քահանայք եւ ժողովուրդք...» կամ «Ահեղ Խորհուրդք...» եւ «Ի Վերին Երուսաղէմ...» երգերը:

8 Եկեղեցականը – «Հոգւոյն հանգուցելոյն...» մաղթանքը:

9 Սարկաւազը – «Վասն հանգուցեալ հոգւոյն աղաչեցուք...» քարոզը:

10 Եկեղեցականը – «Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ ...» աղօթքը: (Այս աղօթքին մէջ կը յիշատակուին հին եւ նոր ննջեցեալներուն անունները):

11 Դպրաց Դասը – «Հայր մեր...» Տէրունական աղօթքը:

Այսպէս կը կատարուի հոգեհանգստեան արարողութիւնը մեր բոլոր եկեղեցիներուն մէջ, առանց փոփոխման եւ հաւատացեալ ժողովուրդին մասնակցութեամբ, ձեռքերուն մէջ վառած մոմ ունենալով, ինչպէս կը տեսնենք կարգ մը գաղութներու մէջ, զօրեղ կերպով պահպանուած, որպէս խորհրդաւոր գեղեցիկ սովորութիւն: Այս սովորութիւնը սկիզբէն գոյութիւն ունէր, երբ մամբը վառած, եկեղեցիէն թափօրով կ'ուղղուէին եկեղեցւոյ կից գտնուող գերեզմանատունը եւ ուղղակի այնտեղ կը կատարուէր պաշտօնական հոգեհանգիստը: Սոյն սովորութիւնը կարգ մը գաղութներու ծխային եկեղեցիներէն անկախ պահպանուած կը գտնենք ցայսօր Մայրապանքերուն եւ վանքերուն մէջ:

ԻՆՉՈՒՒ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՄԵՐԺԵՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԿԱՏԱՐԵԼԸ

Բողոքականները, աղանդաւորները եւ կարգ մը թերահաւատներ կը մերժեն հոգեհանգստեան այս յատուկ արարողութիւնը եւ անոր անհրաժեշտութիւնը, զայն աւելորդ եւ անիմաստ նկատելով: Անոնք կը քննադատեն անոր կատարումը ըսելով՝ ննջեցեալները պէտք չունին աղօթքի եւ ոչ ալ բարեխօսութիւն հայցելու իրենց հոգիներուն համար: Անոնք կ'ըսեն.– «Ոչ մէկ օգուտ ունին մահէն ետք այսպիսի աղօթքներ եւ արարողութիւններ, նոյնիսկ եթէ թողութիւն աղերսելու նպատակով կը կատարուի հոգեհանգստեան արարողութիւնը, այդ բոլոր խնդրանքներն ու աղօթքները օգուտ կրնային ունենալ երբ Աստուծոյ մօտ չէին բարձրացած»:

Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին կը մերժէ այսպիսի թերահաւատութիւն, տեսակէտ եւ ըմբռնում, զորս խոտոր կը համարէ իր հաւատքին եւ աւանդութեանց:

ՈՉ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆԵՋԵՑԵԱԼԻ ՄԸ ՀՈԳԻՈՅՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԿԱՏԱՐԵԼԸ ԾԻՇԴ Է

Ոչ Քրիստոնեայ անձի մը հոգւոյն խաղաղութեան համար աղօթք կամ հոգեհանգիստ կատարելը սխալ է, եթէ անիկա կը հաւատար Աստուծոյ, մեռել-

ներու յարութեան եւ մարդկութեան վերջին դատաստանին եւ յատկապէս եթէ կ'ընդունէր Քրիստոսի Աստուածութիւնը եւ Աստուածորդի ըլլալը, այլապէս ի գուր կը կատարուի այս պատարագը եւ հոգեհանգստեան աղօթքը կամ արարողութիւնը: Երբեք պէտք չէ մոռնալ, որ հոգեհանգստեան արարողութեան եւ աղօթքին ընթացքին կը յիշենք «Քրիստոս ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ անոխակալ եւ բարեգութ...» աղօթքը եւ կը խնդրենք «...յիշեալ զհաւատացեալ ծառայս կամ աղախինդ..., յաւուր ՄԵԾԻ ԳԱԼՍՏԵԱՆ քո...»: Արդ ճիշդ չէ այդպիսի յատուկ աղօթքներ մատուցանել ննջեցեալի մը համար, որ իր կենդանութեան հաւատացած չէր Քրիստոսի Աստուածութեան եւ Աստուծոյ Որդի ըլլալուն, երբ նոյնպէս իրեն համար աղօթք խնդրողներուն մօտ անգամ չենք գտներ:

Ի՞նչ Կը ԽՈՐՀՐԴԱՆԾԷ ԱՅԳՈՒՅՈՎ, ԵՕԹՆՕՐԷՔՈՎ, ՔԱՌԱՍՈՒՆՔՈՎ ԵՒ ՏԱՐԵԼԻՑՈՎ ԵՒ ԻՆՉՈՒՒ ԿՐ ԿԱՏԱՐՈՒԻՄ

ԱՅԳՈՒՅՐ ննջեցեալին թաղումէն ետք անոր գերեզմանին առաջին այցելութիւնն է, առ Աստուած աղօթք բարձրացնելու: Այգուցի կարգը, գերեզմանօրհնէքի եւ հոգիի հանգստեան համար մատուցուած առաջին աղօթքն ու արարողութիւնն է: Այգուցը կարգ մը հայկական գաղութներու մէջ կը կատարուի երրորդ օրը, Յիսուսի գերեզմանին տրուած այցի նմանութեամբ Իւղաբեր կիներուն օրինակով, ապա կը կատարուի Եօթնօրէքը: Սակայն շատեր յաջորդ օրն իսկ, կը կատարեն զայն: Այգուցը եկեղեցականով կատարուելիք արարողութիւն է, ուր ննջեցեալին գերեզմանը անգամ մը եւս կը կնքուի եւ կ'օրհնուի «...անշարժ եղիցի կնիք տէրութեան քո ի վերայ բնակութեան սորա...» (Ծիսարան):

ԵՕԹՆՕՐԷՔՈՎ Ննջման եօթներորդ օրուան առթիւ կատարուելիք յատուկ հոգեհանգստեան արարողութիւնն է ննջեցեալին գերեզմանին վրայ: Եօթնօրէքը կը խորհրդանշէ ստեղծագործութեան եօթներորդ հանգստեան օրը: Հոգիի հանգստեան համար տնօրինուած յատուկ թուականի յիշատակութեան հոգեհանգստեան աղօթք մատուցանելու արարողութիւնն է եւ ոչ գերեզմանօրհնէք եւ կնքում, ինչպէս որ կը կատարուի Այգուցի արարողութեան ընթացքին:

ՔԱՌԱՍՈՒՆՔ: Ննջեցեալի մը պարագաներուն եւ հարազատներուն փափաքին ընդառաջելով, «Քառասունք»ի հոգեհանգստեան պատարագ եւ հոգեհանգիստ կատարելը, ուրիշ բան չէ եթէ ոչ՝ ննջեցեալի մը այս երկրաւոր աշխարհէն քառասուն օրեր առաջ բաժանումին յիշատակի ոգեկոչում:

Քառասունք կը կատարուի խորհրդանշականօրէն Յարուցեալ Քրիստոսի քառասնօրեայ Համբարձումին օրինակով: Այդ իսկ պատճառով, Քրիստոնէական բոլոր եկեղեցիները նոյնպէս յատուկ յարգանքով կը կատարեն մահ-

ուան Քառասունքը ցայսօր:

Քառասունքին հոգեհանգիստը պէտք է կատարուի մահուան քառասուն-
ներորդ օրուան մերձաւոր Կիրակին եւ ոչ թէ անկէ օրեր եւ շաբաթ մը առաջ,
ինչպէս բազմաթիւ հաւատացեալներուն մտքին մէջ այս սխալ հասկացողու-
թիւնը ցայսօր կը գտնենք: Եթէ 40-րդ օրուան ամենամերձ Կիրակին 38-րդ
օրը կը զուգադիպի, Քառասունք կարելի է կատարել, սակայն ոչ աւելի պա-
կաս: Այլպէս կարելի է կատարել 42-րդ եւ 43-րդ օր զուգադիպող Կիրակին:
Ննջեցեալին Քառասունքին առթիւ կատարուելիք գերեզմանի այցը, խունկ
եւ մոմ վառելու եւ առ Աստուած աղօթք բարձրացնելու համար, պէտք է կա-
տարուի ճիշդ 40-րդ օրը, ըլլայ ան հարազատներով հաւաքաբար եւ եկեղեցա-
կանին գլխաւորութեամբ կամ անհատաբար:

ՏԱՐԵԼԻՑ: Ննջեցեալի մը ննջման տարեդարձը կը կոչուի «Տարելից», այ-
սինքն տարի մը լրացուցած եւ ամբողջացուցած: «Տարելից»ին կատարուելիք
հոգեհանգիստը ննջման թուականէն առաջ կատարելը ճիշդ չէ եւ կարելի չէ կո-
չել «Տարելից» եւ ոչ ալ անոր առթիւ կատարուած աղօթք կամ արարողութիւն:

«Տարելից»ին յատուկ հոգեհանգստեան պատարագ եւ անոր աւարտին
հոգեհանգստեան յատուկ պաշտօն կատարելը քառասունք-ին նման, մասնա-
ւոր խորհրդանշանակութիւն չունի, այլ պարզապէս ննջման տարեթիւը յիշա-
տակել:

«Տարելից»ին առթիւ ննջեցեալի գերեզմանին այցը կամ անոր վրայ կա-
տարուելիք հոգեհանգստեան աղօթքը եւ արարողութիւնը, պէտք է կատարել
ննջման թուականին օրը անխախտօրէն եւ նախընտրաբար եկեղեցականին
յատուկ աղօթքներով:

«Տարելից»ին պաշտօնական հոգեհանգիստը պէտք է կատարուի մահ-
ուան թուականին մերձաւորագոյն Կիրակին եւ ոչ թէ անկէ շաբաթներ կամ
ամիսներ առաջ: Եթէ հաւատացեալ մը ննջած է Դեկտեմբեր 17-ին, անոր
«Տարելից»ը կը կատարուի յաջորդ տարի Դեկտեմբեր ամսուն 17-ի մերձաւոր
Կիրակին, այլ խօսքով 15-20-ի միջեւ զուգադիպող Կիրակին: «Տարելից» կամ
«Քառասունք» կատարելը սոսկ պարտականութիւն մը կատարել չէ, այլ
ննջեցեալը յիշել եւ յարգել անոր ննջման յիշատակը:

ՓԱՌԷՆ ՎՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏՆԻ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ (Ե -ԺԳ)

Մեր հին մատենագրութիւնը լման չէ հասած մեզի: Անհետ կորսուած են շատ երկեր: Կան ուրիշներ, որոնց անունը միայն հասած է մեզի: Եւ տակաւին կան երկեր ալ, որոնց մէկ մասը հասած է միայն եւ միւս մասը կորսուած: Այս գրութեամբ կը ներկայացնենք կորսուած այն կարեւոր երկերուն շարքը, որոնք հաստատապէս գիտենք թէ գոյութիւն ունեցած են ժամանակին, բայց հետագային կորած են: Դասաւորած ենք հեղինակներուն համաձայն, ժամանակագրական կարգով:

Ա.- Եզնիկ Կողբացի (390? - 455?). — Թուղթ առ Մաշտոց Վարդապետ, որմէ քանի մը հատուածներ միայն կը մնան Թղթոց Գրքին (էջ 1 - 2) եւ Կնիք Հաւատոյ Ժողովածուին մէջ (էջ 51 եւ 130):

Բ.- Եղիշէ Վարդապետ (400? - 464?). — Մեկնութիւն Ծննդոց: Միայն թէ Վարդան Վարդապետի նոյն գիրքի Մեկնութեան մէջ պահուած են բազմաթիւ հատուածներ:

Գ.- Պետրոս Եպս. Սիւնեաց (500? - 557). —

- 1.- Ճառ ի Ծնունդն Քրիստոսի, որմէ վեց փոքր հատուածիկներ միայն գտնուած են եւ հրատարակուած:
- 2.- Ճառ Ընդդէմ Քաղկեդոնականաց: Յիշած է Ստ. Օրբէլեան. Պատմութիւն Ա. էջ 131:
- 3.- Մեկնութիւնք խրթին եւ գժուարիմաց բանից Հին եւ Նոր Կտակարանաց: Յիշած է Օրբէլեան. Պատմութիւն, Ա. էջ 131:
- 4.- Ներբողեան ի Բաբելի Սիւնի, որմէ օգտուած է Օրբէլեան.- Հմմտ. Պատմ. Ա. էջ 79:

Դ.- Յովհան Մայրավանցի (575? - 640?). — Խրատ Հաւատոյ, որ կը պարունակէր 21 Թուղթեր (նամակներ) եւ նախապէս մաս կը կազմէր ընդարձակ երկի մը, որուն միւս հատորը կը կրէր Խրատ Վարուց տիտղոսը: Այս վերջինը մեզի հասած է եւ հրատարակուած Յովհան Մանգակունիի անունով:

Ե.- Ստեփանոս Սիւնեցի (680? - 735). —

- 1.- Մեկնութիւն Դանիէլի, որմէ օգտուած է Վարդան Արեւելցի:
- 2.- Մեկնութիւն Յոբայ, որմէ օգտուած է Վանական Վարդապետ:

Զ.- Մաշտոց Կթղ. Եղիվարդեցի (չ. 836 - 898). — Թուղթ յաղագս հաւատոյ եւ ինն դասակարգութեանց եկեղեցւոյ, զոր գրած է Գառնեցի Գէորգ Կաթողիկոսի հրամանով, եւ զոր յիշած է Ստ. Օրբէլեան:

Է.- Ծապուհ Բագրատունի (+ 912). — Պատմութիւն, գոր տեսած են Պատմաբան Յովհան Կաթողիկոս եւ Ստեփանոս Ասողիկ: Իր անունով երկ մը հրատարակուեցաւ թէեւ, սակայն այն չի ներկայացներ իր յօրինած Պատմութիւնը: Ծապուհի շարադրած Պատմութեան վերաբերմամբ Յովհաննէս Պատմաբան կը գրէ. նա «յայտապատում իսկ արարեալ է գրոյցս պայազատութեան որդւոյ Աշոտոյ սպարապետին Սմբատայ զիշխանական պատմութիւնն, եւ զթագաւորացն հանգամանաց զկարգս, եւ կամ զդարձ գերելոցն ի Բուղայէ՝ զՀայաստանեայցս իշխանաց եւ նախարարաց, յիւրաքանչիւրն սեփական իշխանութիւնս ամեալ կացեալ հաստատեալ: Եւ թէ ո՞չք ի նոցանէ հոյակապք եւ հարուստք եւ ուժեղակք ընդդէմ հակառակորդաց հինից գտան. եւ կամ ո՞չք յումեքէ եղեն հարստահարեալք, եւ կամ զվախճան նոցա յիւրաքանչիւրումն տեղ: Զի թէպէտ ստուգութիւն սահմանական բանի բացատրութեան, եւ զբոլորովին բաժանումն ապացուցից ոչ կարացեալ ըստ քերթողական հրահանգացն համառօտաբար ընձեռել, սակայն ըստ իւրումն ժամանակի ընտանի գոլով նորա զրուցացն ամենայնի՝ գեղջուկ բանիւ բաւական քեզ տայ պատճառս տեղեկութեան» (Պատմ. Յովհ. Կթղ.ի, Երուսաղէմ, 1867, էջ 166 - 7):

Ը.- Անանիա Նարեկացի (910? - 985?). — Գիր ընդդէմ Սմբատայ Թոնդրակեցւոյ. որուն մէջ հերքած է Թոնդրակեցի աղանդաւորներու մոլորութիւնները եկեղեցւոյ եւ անոր ծէսերուն մասին, ինչպէս կը յիշէ Ներսէս Շնորհալի:

Թ.- Ուխտանէս Եպիսկոպոս (940? - 1000?). — Պատմութեան երրորդ հատորը, որուն նիւթն էր «Մկրտութիւն ազգին որ Ծաղն կոչի»:

Ժ.- Տիմիթէոս Վարդապետ (Ժ. դար). — Մեկնութիւն Արարածոց, որմէ օգտուած է Վարդան Արեւելցի: Յիշեալ Մեկնութեան Յառաջաբանութիւնը եւ Ծննդոց Գրքի սկիզբի քանի մը համարներուն մեկնաբանութիւնը կը տեսնուի Ս. Յ. Թ. 373 ձեռագրին մէջ (էջ 534 - 544):

ԺԱ.- Յովհաննէս Վրդ. Տարօնեցի (970? - 1050?). —

1.- Պատմութիւն Բագրատունեաց, գոր գրած էր Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի հրամանով, եւ որմէ քանի մը թերթ միայն գտնուած է ցարդ:

2.- Գիր հաւատոյ, գոր կը յիշէ Արիստակէս Լաստիվերցի:

ԺԲ.- Յովհաննէս Սարկաւազ Վարդապետ (չ. 1050 - 1129). — Պատմութիւն, որմէ հտք քանի մը հատուածներ փրկուած են Սամուէլ Անեցիի Ժամանակագրութեան շնորհիւ:

ԺԳ.- Մխիթար Գոշ (չ. 1140 - 1213). — Ողբ ի վերայ բնութեանս, ի դիմաց Ագամայ առ որդիս իւր, եւ ի դիմաց Եւայի առ դստերս իւր, գոր կը յիշէ Կիրակոս Պատմիչ:

ԺԴ.- Մխիթար Անեցի (ԺԲ - ԺԳ դար). — Պատմութիւն, գոր կը յիշեն

Վարդան Արեւելցի եւ Ստեփանոս Օրբէլեան. եւ որուն սկիզբի մասէն քանի մը գլուխներ միայն գտնուած եւ հրատարակուած են ցարդ:

ԺԵ.- Վանական Վարդապետ (1181 - 1251). — Պատմութիւն, որ, ըստ Կիրակոս եւ Վարդան պատմիչներու կը պարունակէր մանրամասն պատմութիւնը ԺԳ. դարու առաջին կէսի անցուղարձեւումը:

Ահաւասիկ Վարդան Վարդապետի վկայութիւնը. «Արդ ի վեցհարիւր ութսուն եւ հինգ [= 1236] թուականէն Հայոց մինչեւ յեօթն հարիւր չորքոտասան [= 1265] յորում եմքս մեք, զոր ինչ արարին ազգն նետողաց, ընդ աշխարհս եւ ընդ իշխանութիւնս, որ յայսմ կողմանէ ծովուն մեծի, ընդ Պարսս եւ ընդ Աղուանս, ընդ Հայս եւ ընդ Վիրս, եւ ընդ աշխարհն Հոռոմաց կոչեցեալ. ուր էին բնակեալ Հայք եւ Ասորիք, Յոյնք եւ Տաճիկք եւ Թուրքմանք, գրեալ են մանրամասնաբար փառաւորեալ հայրն մեր Վանական Վարդապետն, եւ հարազատն մեր Կիրակոս Վարդապետն հօրն համանման, զոր մեք ոչ համարձակեցաք երեքկնել կամ բազմաբանել, այլ համառօտ բերել միայն զթիւ ժամանակին նշանաւոր իրաց եւ գործոց յիշատակօք ի լրումն մերոյ գործառնութեանս» (Պատմութիւն, Վենետիկ, 1901, էջ 146 - 7):

ԺԶ.- Բարսեղ Վրդ. Մաշկեւորցի (1280? - 1345?). — Մեկնութիւն Աւետարանին Մարկոսի. առաջին հատորը կորսուած, երկրորդ հատորը միայն հասած է մեզի:

Վերոյիշեալ կորսուած երկերու շարքին մէջ առաւելապէս աչքի կը զարնեն արժէքաւոր Պատմութիւնները, Շապուհ Բագրատունիի, Յովհաննէս Տարօնցիի, Սարկաւազ Վարդապետի, Մխիթար Անցիի եւ Վանական Վարդապետի, որոնց շնորհիւ պատմագրական մեր ճոխ մատենադարանը աւելի եւս պիտի հարստանար արդարեւ, եւ մեր թանկագին մշակոյթին ստեղծագործած փառքերը նոր լոյսերու մէջ պիտի շողային:

ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ
«ՎԱՆԱՏՈՒՐ»

THE TWELVE APOSTLES

The word *Apostle* is a Greek word, and it means one “who is sent forth”, having been entrusted with a special mission.

It is related in the Gospels that from the beginning of His ministry our Lord called some twelve men and gave them intensive training for a specific office, in which authority and duty were joined. He named them Apostles.

The Apostles were to be with Jesus while He was on earth, to aid Him in the preaching and in the establishment of the Kingdom of God on earth.

The mission of the Apostles is summarized in the following words of instruction, which our Lord gave them before His Ascension into heaven: “All power is given to me, in heaven and on earth. As the Father has sent me, I also *send* you. Go ye therefore, and *make disciples* of all nations, *baptizing* them in the name of the Father and of the Son and of the Holy Spirit, *teaching* them to observe all that I have commanded you; and behold, I am with you all days, even unto the end of the world” (Matt. 28:18-20).

The Apostles’ lives were a constant exercise of this last instruction. Wherever they went they preached the Gospel with authority, being the authentic witnesses of the life and teachings of our Lord; they established churches wherever they went. Since the authority, with which the Lord empowered the Apostles, was given them not for personal use but for the entire Church, it is natural to assume that this authority should last, and that it should remain in the Church after the death of the Apostles. Therefore, like their Master, the Apostles also selected some people as their successors and transmitted their authority to them. These successors of the Apostles were later called *bishops*. The power of a bishop, in governing and teaching the Church, is essentially the same as general authority of an Apostle.

The Church has been called “Apostolic”, because the mission of the Church is identical with the mission of the Apostles. When we say that our Church is “Apostolic”, we mean that the Church of today is identical with the Church which was founded by Jesus Christ and of which the government and the continuation was entrusted to the Apostles. The Apostolicity of a church is of great importance, because it is the surest sign of the true church of Christ. *Apostolicity* is one of the four marks of the Church. It contains in itself the other three marks of the Church which are *Unity, Sanctity, Catholicity*; an Apostolic Church can be only One, Holy and Universal.

The term “*Apostolic Church*”, also signifies, in its narrower meaning, those particular ancient Churches which were directly founded, or at least for a while governed, by an Apostle, and which on that account, enjoyed a

special dignity. Our Church is “Apostolic” in this sense too. By the term *Apostolic Succession* is meant that the mission conferred by Jesus Christ upon the Apostles passes from them to their legitimate successors, in an unbroken line, until the end of the world. Apostolic Succession ensures the continued identity of the Church.

Let us say a few brief words about each of the twelve Apostles of Christ.

(1) *St. Peter* was the most active figure among the Twelve. His former name was Simon, which Jesus changed into Peter, which is a Greek word meaning “rock”. He made the memorable confession: “thou art Christ, the Son of the living God.” thus he became the first official member of the Church, because the Church was going to be composed of those who would accept our Lord as “Christ” (which means One “whom the Lord has anointed”) and as “Son of God”. Although St. Peter had the weakness to deny his Lord when Jesus was arrested, nevertheless he repented, and was later pardoned and was restored to his office as Apostle by Christ. It was he who gave the first Christian sermon on the day of Pentecost. He first preached in Jerusalem; he was imprisoned but miraculously escaped from the prison. He was finally crucified in Rome, head downwards in 67 A.D.

(2) *St. Andrew* was Peter’s brother. He was one of the first to follow our Lord as disciple. He preached in northern Greece, Epirus and Scythia, and suffered martyrdom in about 70 A.D. on X-shaped cross, which for that reason is called St. Andrew’s Cross.

(3) *St. John* has been called “the beloved Disciple” in the Gospel. He was the one among the Apostles who had the courage to follow Christ to the place of His Crucifixion. He was the only faithful disciple standing at the foot of the Cross on Calvary. St. John became the adopted son of the Blessed Virgin Mary, the Mother of Christ, and took good care of her until her death. He went to preach in Asia Minor, and was later banished to an island called Patmos, where he experienced those marvelous visions or revelations which are recorded in the last book of the New Testament, called *the Apocalypse*, or the Book of Revelation. He also wrote the last Gospel of St. John, and three Epistles. He died at the age of one hundred years by a natural death.

(4) *St. James the Major* was the elder brother of St. John. He was a daring and brave person. For that reason he was the first among the Apostles to be martyred, being beheaded in Jerusalem in the year 44 by King Herod Agrippas (Acts 12:2). The famous St. James’ Armenian Monastery of Jerusalem is dedicated to his name. The Sanctuary where his head is buried and where a beautiful church is built, is visited and venerated not only by Armenians but by all Christians who go to Jerusalem as pilgrims or visitors. It is now one of the most important holy places in the

Holy City.

(5) *St. Matthew* was probably the only one among the Apostles who was not a fisherman. He was a government official, a tax collector, and perhaps the one Apostle who had a better knowledge of reading and writing. He wrote the first book of the New Testament, the Gospel according to St. Matthew. He preached among the Persians and Parthians, and was martyred in Parthia (present Iran).

(6) *St. Thomas* was famous for his doubts and for his realism. He would not believe in the Resurrection of Christ until he saw, on the hands and feet of Jesus the marks of the Crucifixion. He went as far as India, where he was martyred, pierced with a lance, on a hill which is now called "Mount of St. Thomas" near Madras. He founded the Church of the Christians of St. Thomas in Malabar, South India.

(7) *St. Philip* is the only one among the Apostles who had a Greek name which means "horse lover". Probably he spoke Greek, as it was to him that "certain Greeks came" with the request to be admitted to the presence of Jesus (John 12:20-22). He preached in Asia Minor and was crucified in Hierapolis.

(8) *St. Thaddeus* was the first Apostle to visit Armenia. he preached first in Syria and the upper parts of present day Iraq; he then entered Armenia in 44 A.D., made many converts and was martyred there in 66 A.D.

(9) *St. Bartholomew* was the same as Nathanel, "an Israelite indeed, in whom there is no guile" (John 1:47). He was the second Apostle of Armenia. He preached first in Arabia and Persia, and was later martyred in Armenia in 68 A.D. His tomb was venerated by Armenians until 1915 when Armenians were deported by Turks from their homeland. The shrine now is in ruins.

(10) *St. Simon* "The Zealot" preached in North Africa and was martyred in Persia.

(11) *St. James the Lesser* was the son of Alphaeus. He preached in Palestine and Egypt and was finally crucified in Lower Egypt.

(12) *St. Matthias* was chosen to take the place of Judas Iscariot, who betrayed the Lord. He preached in Ethiopia and was martyred there.

(13) *St. Paul* was not one of the Twelve, but was converted miraculously one year after the Resurrection of the Lord. Paul was first a persecutor of Christians. His conversion took place as a result of a vision in which he saw Christ bidding him not "to kick against the goads" (Act 26:14), but follow His instructions (Acts chapter 9). Though not of the twelve, yet among all the Apostles St. Paul was the most ardent and diligent laborer. He wrote many Epistles, which we still read in the Church. He is called the Apostle of the Gentiles, because he carried the gospel to the pagan world. He

travelled extensively, and was finally martyred in Rome in 67 A.D.

“Remember your leaders, who preached to you the word of God, consider the outcome of their life, and intimate their faith ... do not be led away by diverse and strange teachings” (Heb. 13:7-9). These memorable words have always echoed in the hearts of early Christians as referring to the Apostles, their teaching and life. The members of the early Church had a profound respect for the Apostles when they were living on earth. We must have the same respect; and that is what we show by remembering them on Apostles’ Day. The Armenian Church commemorates each Apostle twice in the year; first on the feast of Twelve Apostles, secondly they are celebrated two by two on various Saturdays of the year. Our veneration of their memory should find expression in the devotional reading of the Apostolic writings, that is, the Gospels and the Epistles of the Apostles, in following their instructions, and in imitating their virtues and their devotion to Christ, for the salvation of our souls, for the revival of our Church and for the greater glory of God the Almighty, whose devoted servants they were.

REV. NERSES MANOOGIAN
PHILADELPHIA



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Չորեքշաբթի եւ Հինգշաբթի, Յուլիս 23-ին եւ 24-ին, Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը հիւրընկալեց Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու Առաջնորդներն ու Ազգային Վարչութեանց Ատենապետները:

Ժողովին մասնակցեցան Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական Արք. Զօլոյեան, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեան, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեան ատենապետներ՝ Պրն. Ճաֆ Մարտոյեան (Արեւելեան), Տոբ. Կարօ Յակոբեան (Արեւմտեան) եւ Տոբ. Ժան Առաքելեան (Գանատա) եւ Թեմիս Ազգային Վարչութեան անդամներ Տոբ. Կարպիս Հարպոյեան, Պրն. Սիմոն Փօլատեան եւ Տիկին Օսիկ Միսիարթիմեան:

Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու այս ժողովը գլխաւորաբար անդրադարձաւ Հայց. Առաքելական եկեղեցւոյ առաքելութեանէն բխող աշխատանքի դաշտերուն, յատկապէս նկատի ունենալով մեր ժողովուրդին հոգեմտաւոր պահանջները եւ հետեւեալ աշխատանքային դաշտերը.-

Կրօնական Դաստիարակութիւն, Երիտասարդական, Կրօնական Հրատարակութիւններ, սարկաւագաց եւ դպրաց պատրաստութիւն, ծուխերու վերակազմակերպում եւ նոր ծուխեր, Հայեցի Դաստիարակութիւն, Կաթողիկոսարան եւ թեմեր, միջ-թեմական փոխ-յարաբերութիւններ, Կիլիկեան Թեմի 50-ամեակ, Ղեւնդեանց Համագումար, Ամուսնալուծում եւ եկեղեցի, Միասեռականութիւնը եւ եկեղեցին, միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութիւններ, եւ ի վերջոյ յառաջիկայ Դեկտեմբերին տեղի ունենալիք Ազգային Պատգամաւորական Ընդհանուր ժողովի հարցերը:

Վերոյիշեալ հարցերուն հետապնդման համար, մշակուեցան ծրագիրներ եւ աշխատանքի ուղեգիծ, որոնց հետամուտ պիտի ըլլան նշանակուած յանձնախումբերը:

ԴԻԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ